




ԷԶՄԻԱՇԻՆ

1992

Ը



ԽԻԹ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1992



ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



35-92

17708-247



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻ ԴԺԲԱԽՏ «ԹՈՒՂԹ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ»

Վերջերս Մայր Աթոռում ստացուեց Յովհաննէս-Պետրոս կաթողիկ հայոց արքայապետ Պատրիարքի «Թուղթ շրջաբերական»-ը «Վերադարձ Հայաստան» վերնագրով, 7 Յունիս 1992 թուակիր, Պատրիարք Հօր ստորագրութիւնը կրող:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը և մենք բոլորս այստեղ ծանր յուսախաբութիւն և ափսոսանք ապրեցինք ընթերցելով վերոյիշեալ փաստաթուղթը, որը նենգափոխումն է մեր Մայր Եկեղեցու մօտ երկհազարամեայ պատմութեան և վիրատարանք հայ հաւատացեալ մեր ողջ ժողովրդի համար, նաև ժխտումն է արդի միջեկեղեցական Էկումենիկ ոգու ու մի անխիղճ փորձ՝ մեր հայրենի այնքան տագնապալի այս ծանր օրերին քաղկեդոնական չիմար վճճեր յարուցելու Հայաստանում և նոր պառակտումներ ստեղծելու մեր ազգի ծոցում: Մեղք է մեր ժողովրդին:

Զենք ուզում հաւատալ, թէ բուն հեղինակը ինքը Յովհաննէս-Պետրոս Պատրիարքն է: Այո, կարծում ենք, թէ այս «Թուղթ շրջաբերական»-ի հեղինակը կամ հեղինակներից մէկը Սեթեան կաթողիկ եպիսկոպոսն է Միացեալ նահանգներից, որովհետև նա է, որ սրանից շուրջ տասը տարիներ առաջ մի երկարաշունչ յօդուած տպագրեց Վիեննայում գերմաներէն լեզուով, օտարներին «ապացուցելու» համար, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր Սուրբ Էջմիածնի կենտրոնով՝ անվաեր Եկեղեցի է, և որ պարզապէս անգէտ ժողովուրդն է համարում Սուրբ Էջմիածինը քրիստոնէական եկեղեցական օրինաւոր կենտրոն:

Մէջբերենք մի պարբերութիւն յիշեալ «Թուղթ շրջաբերական»-ից, որը բնորոշում է և ճշտում հեղինակի տեսութիւնն ու նպատակը՝

«Ինչպէս պատմութիւնը կը վկայէ, Հայոց Եկեղեցին ծնաւ որպէս անբաժան մէկ մասնիկը Քրիստոսի Տիեզերական Եկեղեցիին: Ան մինչև Ե.-րդ դար, ծաւալուած Տիեզերական Եկեղեցիին հովանիին տակ, ուր մշակեց իր ուրոյն Մէսք, Գրականութիւնը եւ կանգնեց իր եկեղեցական կառոյցները: Սակայն Քաղկեդոնական պայքարը պատակտեց Հայոց Եկեղեցին, բաժանեց Քրիստոսի անձեռագործ պարեգօտը: Դաւանակաւ հալածանքներու աստկացումով՝ Հայ Կաթողիկէութիւնը տարտղնեցաւ, դարերու ընթացքին փոքրամասնութիւն մը դարձաւ, իր ներկայութիւնը միշտ պահպանելով հայրենի հողին վրայ...»:

Անշուշտ «Տիեզերական Եկեղեցի» ասելով՝ թղթի հեղինակը հասկա-

նում է Կաթոլիկ Եկեղեցին, որ պատմական և այժմեան իրականության չի համապատասխանում:

Պատմականօրէն, առաջին դարերում, Ընդհանրական Եկեղեցի ասելով՝ հասկացում էր համաքրիստոնէական հաստի ու սիրոյ եղբայրութիւնը և համերաշխ գործակցութիւնը տարբեր եկեղեցական՝ իրարից անկախ Աթոռների (կենտրոնների), առաքելական յաջորդականութեան հիման վրայ, ամէն մէկը իր եպիսկոպոս-հայրապետով, ինչպիսին էին, օրինակ՝ Անտիոքի, Ալեքսանդրիոյ, Հռոմի, Հայաստանի և այլ պատմական Աթոռներ: Յետագայում, 5-րդ դարից յետոյ է, որ տեղի ունեցան պառակտումները և հակամարտութիւնները եկեղեցական կենտրոնների, որոնց ծանօթ պատմութիւնը տարածում է աելի քան հազար հինգ հարիւր տարիների վրայ:

Վերնում մէջբերումս պարբերութեամբ և մի քանի այլ հատուածներով, Յովհաննէս-Պետրոս Պատրիարքը պարզապէս թեթև գրչով անվաւեր և հերետիկոս է համարում Հայաստանեայց Եկեղեցին և աւելին՝ սեփականացնում է Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, Սուրբ Էջմիածինը և մեր Ոսկեդարը, իբրև Կաթոլիկ Եկեղեցուն վերաբերող սրբութիւններ և արժէքներ: Եւ ահա, նա այսպէս է հասկանում Կաթոլիկ Եկեղեցու «Վերադարձը Հայաստան»: Պարզապէս ապշեցուցիչ է:

Մայր Հայրենիքում, ամէն օր, ամէն ժամ մեր պետութեան ու ժողովրդի ապրած այս ծանրածանր պայմաններում, երբեք սիրտ չունենք «քիզանդական» սին վէճերով զբաղուելու, սակայն յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան յայտարարում ենք, որ ստիպում ենք պաշտպանելու մեր Մայր Եկեղեցին, մեր ազգային պատմական Եկեղեցին:

Խոր յուսախաբութիւն է ապրում մանաւանդ մեր ծերունազարդ Հայրապետը՝ Վազգէն Ա. Կաթողիկոսը, նա՝ որ իր ողջ կեանքում յարգանք է ունեցել և այժմ էլ ունի Հոռութեան Կաթոլիկ մեծ Եկեղեցու և Մխիթարեան հայրերի վաստակի նկատմամբ, նա՝ որ սնցեալ տարի Հայաստանի խորհրդարանում «խղճի ազատութեան» օրէնքի քննարկման օրը իր ճառում, հայրական սիրով յայտարարեց՝ հայ կաթոլիկ եղբայրների կրօնական գործունէութեան իրատւոյնը Հայաստանի մի քանի գիղերում, ուր որոշ թոով հայեր իրենց կաթոլիկ են համարում, նա՝ որ յատուկ պաշտօնագրով իր ստորագրութեամբ 1990 թ. Դեկտեմբերի 4-ին դիմեց Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մեծաւորին, առաջադրելով, որ Հայաստանում հայ կաթոլիկ համայնքները գործեն Մխիթարեան միաբանութեան խնամքի ու իրաւասութեան ներքոյ: Ահա մի հատումս այդ նամակից՝ «Այս կերպիւ Չերեքազանքն ալ պիտի իրականանայ «Մխիթարեան անկիւն» մը ունենալու Հայաստանի մէջ: Մեր ջերմ ցանկութիւնն է, որ Հայաստանի հայ կաթոլիկ համայնքը օրինաւորապէս և մշտապէս կապուած մնայ Ա. Ղազարի Մխիթարեան ուխտին հետ և յետագային հոգևոր հովիւները ըլլան ձեր միաբանութեան շարքերէն»:

Այժմ, սակայն, իրօք մեծ է մեր բոլորի հիասթափութիւնը, որ Պէյրութի հայ կաթոլիկ պատրիարքութիւնը, չենք հասկանում ինչո՞ւ, փորձում է իր իշխանութեան ենթարկել Հայաստանի լիշեալ գիղերի կաթոլիկ եկեղեցական համայնքները, առայժմ օգտագործելով երկու Մխիթարեան հոգևորականների, սակայն ինչպէս յստակ երևում է «թուղթ շրջաբերական»-ից, քնդարձակ ծրագրումով կամենում է գրեթէ տէրն ու տերիկանը դառնալ Հայաստանի հայութեան, իր «տիեզերական Եկեղեցու իշխանութեան ներքոյ»:

«Վերադարձ Հայաստան» նշանաբանով սանձազերծուած այս արշալի

փորձի դեմ, կարծում ենք, որ պետք է իրենց յստակ խօսքը ասեն մահ Մխիթարեան մեր եղբայրները, որոնց իրաստությունից խլում է Հայաստանի հայ կաթոլիկ համայնքների հոգևոր հոգածության պարտականությունը:


Մենք, յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սրտագին կոչ ենք ուղղում մեր նորաստեղծ անկախ պետության մեզ հարազատ իշխանություններին և մեզ նույնքան հարազատ ազգային քաղաքական կուսակցություններին, որոնք անմեման ոգեշնչումով անցեալ տարի Սեպտեմբերի 21-ին անկախության պատմական հռչակումով հիմքերը հաստատեցին հայոց ազգային ազատ պետականության, որ նույն ազգային անկախության ոգով, պաշտպան կանգնեն մեր բազմաշարժար պատմական ազգային Եկեղեցուն, որն իր բազմադարեան առաքելությամբ ու իրագործումներով, եղել է և մնում է կրօնական մակարդակի վրայ՝ հոգևոր հիմքը մեր ազգային անկախության գաղափարախօսության:


Ինչպես յայտարարեցին Օգոստոսի 30-ին իրենց հայրական խօսքով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ը և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ.-ը, թող լաւ իմանան բոլորը, որ՝

«Հայաստանը նկատել որպէս քրիստոնէության քայրզւոյթեան համար բաց և խոպան դաշտ՝ ամէն բանից առաջ՝ նշանակում է մեղանշել ճշմարտության և իրականության դէմ: Առաւել ևս, սիրոյ, յարգանքի և ճանաչման թերացում է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և յուսատրաշանունդ հայ ժողովրդի հանդէպ ... Քրիստոս գահակալում է այստեղ. Իր Իջման սուրբ Սեղանը որպէս սրբութիւն սրբոց ճառագայթում է այստեղից»:

Եթէ Յովհաննէս-Պետրոս Պատրիարքի դժբախտ «Թուղթ շրջաբերական»-ով հռչակուած հակապատմական և հակաէկումենիկ պարբերութիւնները պաշտօնապէս չեղեալ չհամարուեն, այդ դէպքում մնում է, որ Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ճշտեն իրենց վերաբերմունքը Հայ Կաթոլիկ Եկեղեցու պատրիարքության նկատմամբ:

Ուշադիր լսենք մեծ առաքելի պատուէրը՝ «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտրի ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս» (Գաղ. Գ. 26—28): Ամէն:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԻ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ, Տ. ԹՈՐԳՈՍԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ, Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ, ՀԱՄՕՐԷՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԵՐՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆՅ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՅ,
ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍԻՐԵՅՆԱԼ ՀԱՒԱՏԱՅՆԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Մեր Հայրը Սուրբ Աւետարանն է,
Մայրը մեր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»:
(Եղիշէ պատմիչ, Ե դար)

Գոհութիւն բարեաց պարգևատու մեր հայրերի Աստծուն, որ ահա մօտ
քսան դարեր շարունակ մեր ազգի կեանքում վառ է պահում լոյսը Յիսուսի
Աւետարանի, «Լոյսը աշխարհի» մեր Առաքելական մայր դաստիարակ
Եկեղեցու հովանու և օրհնութեան ներքոյ թէ՛ ի Հայաստան և թէ՛ ի սփիւրշ
աշխարհի:

Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և նրա հոգևոր սպասարկների առաքելությունը նոր ժամանակների ազգային զարթոնքի ու քաղաքական անկախության պայմաններում, կոչում է ինքը ևս նոր զարթոնք ապրելու և հոգեշէն նոր իրագործումներ կեանքի կոչելու ի մխիթարություն և վերաշինություն մեր հիմնադրոյ ազգի հոգևոր կեանքի՝ «լաւոն Յիսուսի, լաւոն հայրենեաց» Վարդանանց հերոսամարտի պատգամով:

Վերջին չորս տարիների մեր հայրենի ժողովրդի ազգային-քաղաքական հրաշք փոթորկումով և մեր հայրենի պետության անկախության հռչակումով, նոր էջ բացուեց նաև մեր ազգային Եկեղեցու բազմադարեան ոսկեայ մատենանի մէջ:

Մնում է, որ մենք, Հայ Եկեղեցուն ծառայողներս, յստակ տեսնենք այս նորահրաշ իրողությունը, ու այդ նոր բացում էջի վրայ արձանագրենք մեր հոգևոր, բարոյական և հայրենաշէն գործունէութեան արարումները, նոր շնչով, նոր եռանդով, նոր տեսիլքներով:

Սոյն մեր կոնդակով Մենք հայրական կոչ ենք յղում մեր Եկեղեցու նուիրապետական Աթոռներին, թեմական և համալսարանին կենտրոններում գործող մեր հոգևոր առաջնորդներին և վարդապետներին ու քահանայ հայրերին՝ շարունակելու իրենց առաքելությունը բազմապատկեալ եռանդով, բազմապատկեալ նուիրումով, բոլոր տեսակի դժուարութիւնները յաղթահարելու կամեցողութեամբ, զի «դժուարութեան ճանապարհով կարելի է հասնել աստղերին»:

Մեր համար յոյժ մխիթարական է այս օրերին հաստատել, որ իրօք մեր Եկեղեցին ու նրա նուիրեալ ուխտապահ սպասարկներից շատերը Ս. Էջմիածնի օրհնութեան ներքոյ տքնում են իրենց պարտքը կատարել Մայր Հայրենիքում ու Արցախում և կարևոր չափով նաև ներքին սփիւքի տարածքի վրայ, ստեղծում են նոր բարեկապատ պայմաններում:

Յիրաւի, համաձայն նորամշակ մեր ներքին կանոնադրութեան, կազմակերպում ու գործում են թեմական և համալսարանին մարմինները, կազմակերպում են քրիստոնէական քարոզչութեան կենտրոններ, հրատարակում և հաստատեալ ժողովրդին է լանձնում տաւնեակ հազարաւոր օրինակ տպաքանակով սրբազան գրականութիւն, լոյս են տեսնում կրօնական պարբերաթերթեր, կազմաւորում են երիտասարդաց, տիկնանց եկեղեցաւեր միութիւններ, մանկական կրօնական երգչախմբեր և այլ հոգեշէն միջոցառումներ:

Խորին գոհունակութեամբ արձանագրում ենք նաև Միացեալ Նահանգաց և Կանադայի մեր թեմերի լայն մասնակցութիւնը Քրիստոնէական քարոզչութեան աշխատանքներին, որ կազմակերպում են Հայաստանի տարածքի վրայ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող Հոգևոր Ծեմարանը և Սևանայ կղզու վրայ հիմնում Արարատեան թեմի դպրանոցը նուիրում են մեր Եկեղեցու համար հոգևոր սպասարկների նոր սերունդներ պատրաստելու գործին, առ այսօր ունենալով աւելի քան հարիւր ուսանողներ:

Մխիթարական է հաստատել նաև, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ներքին թեմական կազմակերպութիւնները, արտասահմանի մեր թեմական կենտրոններից և քոյր Եկեղեցիներից ստացում են ծախքանակ սննդամթերքով և կարևոր գումարներով լայն աշխատանք են ծաւալել վերջին երեք շրջանի և Արցախի մեր ժողովրդին, նաև տարբեր շրջաններից տեղահան եղած փախստական կարօտեալ բազմաճաւար ընտանիքներին ու որբերին:

Արդար է արձանագրել այս իրողությունները գոհունակությամբ և Մեր գնահատանքի, քաջալերանքի ու օրհնության խօսքը ուղղել մեր թեմակալ սրբազան առաջնորդներին, Մայր Աթոռիս միաբան վարդապետներին ու թեմերում գործող քահանայ հայրերին, որոնցից շատերը իրենց պարտքը կատարում են անձնուիրաբար ու կարգապահությամբ:

Մասնատր գնահատանքով նշում ենք անձնագոհ գործունեությունը Արցախի թեմակալ առաջնորդի, նրա ծառայած հոգևոր և մարդասիրական ու հայրենամուէր անդգնաբեկ աշխատանքի համար:

Սակայն հարկ է յիշել նաև, որ Հայաստանում և յառկապէս ներքին սփիւղքի տարածքի վրայ բնակուող աւելի քան երկու միլիոն հայ Եկեղեցու զաւակների կրօնական եկեղեցական կարիքները այնքան շատ են, որ մեր հոգևոր սպասաւորները իրենց սահմանափակ քանակով չեն կարող բաւարարել հաւատացեալ ժողովրդի բոլոր կարիքները: Հունձքը առատ է, մշակները՝ սակաւ: Յոյս ունենք, որ առաջիկայ երկու-երեք տարիների ընթացքում մեր Հոգևոր Ծննդաբանը պիտի կարողանայ հոգևոր նոր սպասաւորներ դաստիարակել, պատրաստ նուիրուելու հովուական աշխատանքի:

Մի՛նչ այդ, մնում է, որ Հայաստանում ու ներքին սփիւղքում ծառայող մեր հոգևոր հայրերը իրենց ուժն ու եռանդը բազմապատկեն հնարատրին չափ, հոգևոր սնունդ բաշխելու մեր հաւատաւոր ժողովրդին:

Երբ գրի ենք առնում այս տողերը, չենք կարող տխրութեամբ չյիշել նաև, թէ Մայր Աթոռիս մի քանի միաբան վարդապետներ, հակառակ Մեր հայրական կրկնակի հրաւերներին, արտասահմանից չեն կամենում վերադառնալ Ս. Էջմիածին և մի քանի քահանայ հայրեր էլ Հայաստանից լքում են իրենց եկեղեցիները և մեկնում արտասահման, դրժելով իրենց ծառայութեան ուխտը: Ցաւով արձանագրում ենք այս տխուր երևոյթը և յոյս ունենք, որ նրանց հոգում կը զարթեն խղճի ձայնն ու պարտքի գիտակցութիւնը, և նրանք կը վերադառնան Մայր Հայրենիք: Վատահ ենք, որ արտասահմանի մեր թեմերը և եկեղեցական համայնքները չեն քաջալերի դասալիքներին:

Այս օրերին, երբ մեր ողջ ազգը միասիրտ ու միակամ իր անկախ պետութեան հիմքերն է ամրապնդում և ցուցաբերում է հոգու անձնան տոկունութիւն՝ դիմագրաւելու ամեն դժուարութիւն և փորձութիւն, երբ հազարատր կամաւոր ազատամարտիկներ իրենց կեանքն են զոհաբերում մեր Արցախ աշխարհի երկնամերձ բարձունքներում, Մենք, իբրև Հայրապետը Հայոց, մեր Եկեղեցու հոգևոր զինուորներից սպասում ենք առաւել անձնուրացութիւն, առաւել նուիրումի ոգի, առաւել հոգևոր աշխատանքի եռանդ, ժողովրդին զօրավիզ կանգնելու ամեն տեղ ու ամէն առթիւ, քանի և գործով ու անձնական օրինակով, իրենց անսակարկ մասնակցութիւնը բերելու համազգային զարթօնքին ու փոթորկուող սրբազան մարտին, հաւատքով աներեր, որ հայոց ազգի արդարութեան լուսը կարելի չէ ընդմիշտ խափանել: Կը գայ ժամանակը, որ այդ լուսը կը ճեղքի խաւարը, կը փշրի ստի ու կեղծիքի պատնէշը, կը քանդի ոճիրի բուլը և յաղթական կը ճառագայթի հորիզոնից հորիզոն: «Յանցանել մրրկի, եղծանի ամպարիշտն, իսկ արդարոյն խոյս տուեալ՝ կեցցէ յաիտեան» (Առակք Սողոմ. 10—25):


Մենք կ'ուզենայինք, որ մեր ազգային Եկեղեցիս՝ մեր ողջ հոգևորականութիւնը, իր զոհաբերումի բաժինը բերէր անսակարկ կերպով, յանուն արդարութեան ու ազատութեան մեր ողջ ազգի կողմից մղուող սրբազան մարտում և յանուն ապագայ լալթութեան:

Երանի մարդիկ ու ազգությունները կեանքի կոչելին պատգամը մեծ սաղ-
մոսերգութի՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեցին, արդարութիւն և
խաղաղութիւն համբուրեցին» (Սաղմ. 85. ժԱ.). ամեն:

Գալստի Դ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 28 օգոստոսի
1992 Փրկչական ամի
և ի տումարիս Հայոց ՌԵՆԻԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Հմր. 1907



ՀԱՅՐԱԿԱՆ ԽՈՍՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սույն տարվա օգոստոս ամսի 25—30-ի օրերին, Մենք՝ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց և Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռում անձնական եղբայրական, սրտակցական խորհրդակցություններ ունեցանք Հայ Առաքելական Եկեղեցու առաքելության մասին, մասնավորաբար մեր մտածումները սկետելով մեր հայրենիքի՝ Հայաստան աշխարհի ներկայի կրոնական կացության և առ այդ մեր Եկեղեցու դերի շուրջ:

Պարք զգացինք հետևյալ պարագաներն ու մտածումները մեր սիրելի ժողովրդի զավակների ուշադրությանը հանձնել, ի Հայաստան և ի ափսոսա աշխարհի, որպեսզի նրանք հաղորդակից լինեն մեր հալացքներին ու մտահոգություններին և շարունակեն իմաստությամբ ու անձնվիրությամբ իրենց պարտքը կատարել իրենց Սուրբ Եկեղեցու, Հայ Ազգի և Մայր Հայրենիքի հանդեպ:

1. Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակումից հետո և մեր հայրենիքում ստեղծված ազատության պայմանների բերումով՝ Հայ Եկեղեցու առաքելությունը նոր ուղղություն, նոր ընթացք և շեշտված կարևորություն ստացավ: Հայ ժողովրդի համար քրիստոնեական հոգևոր սննդի մատակարարումը առավել ստիպողական բնույթ և լայն տարողություն ստացավ:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր Միաբանությամբ, հոգևորական դասով, իր թեմերով և բոլոր աշխարհական գործակիցներով, նաև սերտ գործակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքական Աթոռների, եռանդագին ու բազմաբղյուն գործունեություն ծավալեց եկեղեցական կեանքի կազմակերպության, քրիստոնեական հավատքի քարոզչության, ժողովրդի մարդկային, ընկերային անմիջական և տարրական կարիքների ապաստնորության մարզերում, մասնավորաբար Լեռնիսականի շրջանի երկրաշարժի աղետի ու նրան հետևող ժամանակահատվածներում:

- Բազում եկեղեցիներ վերաբացվեցին.
- Նոր թեմեր կազմվեցին.
- Նոր համայնքներ ստեղծվեցին.
- Եկեղեցաւեր երիտասարդական ու պատանեկան նոր կազմակերպություններ առաջ եկան.
- Կեանքի կոչվեցին կրոնական բովանդակությամբ մամուլ, պարբերականներ և այլազան հրատարակություններ.

հեռուստատեսությամբ կանոնավոր հերթականությամբ սփռվեցին քրիստոնեական հավատքի քարոզչության ծրագրեր, քարոզներ և զրույցներ.

- Կրոնական դասավանդություններ տեղի ունեցան դպրոցներում.
- Սկիզբ առան կրոն դասավանդելու կոչված ուսուցիչների պատրաստման դասընթացներ.
- Հովվապետական և հովվական այցելություններ կատարվեցին Հայաստանի տարբեր շրջաններ.
- Ժողովրդական լայն խավերի մասնակցությամբ ծիսական, կրոնական արարողությունները, մանավանդ պատարագի մատուցումներն ու խորհրդակատարությունները նոր շուք ստացան:

3. Հայաստանի աշխարհագրական սահմաններից դուրս **«ներքին սփյուռք»** բացատրությամբ ներկայիս բնորոշված երկրներում (նախկին խորհրդային Միությունից անջատված և անկախացած պետություններում) Հայաստանյայց Եկեղեցու համար բացվեց հոգևոր գործունեության նոր և ընդարձակ դաշտ: Այդ երկրներում կրոնական և ազգային վերագաղթոնքի շարժումը մի նոր թափ ստացավ, բայց, ցավոք, Սուրբ Էջմիածնից դեռ ոչ բավարար թվով հոգևորականներ ուղարկվեցին նոր համայնքներ կազմելու և նրանց հոգևոր ծառայություններ մատուցելու համար:

4. Արցախում, ազատագրված կյանքի պայմանների ստեղծմամբ, առանձին թեմ կազմվեց, օծված՝ թեմական Առաջնորդով և հոգևորական սպասավորներով, Արցախի ժողովրդի երկար տասնամյակների հոգևոր ծարավը գոհացնելու, նաև ազգային տեսակետով նրանց հոգեկան արիությունն ու տոկունությունը ամրապնդելու այն արդար պայքարի համար, որ նրանք հարկադրվեցին մղել — և շարունակում են մղել — Արցախի դեմ գործված անարդարությունների և նրան պարտադրված զրկանքների վերացման ի խնդիր:

5. Այս և դեռ բազում այս տեսակի ծառայություններ բնականորեն ունեցան և կունենան իրենց դրական բարերար ազդեցությունը մեր ժողովրդի և հայրենիքի համար:

Բայց կարիքները շատ ավելի սուր հանգամանք ու լսողական բնույթ ստացան: Ինչպես հաճախ ասվում է. «Ծով են կարիքները Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում»:

6. Ահա այս կացության մեջ արտասահմանից այլ Եկեղեցիներ, հայ թեոտար, ուրիշ եկեղեցական շարժումներ, ապակեղեցական և աղանդավորական կազմակերպություններ սկսեցին քարոզչական մի աշխատանք, որը մի տեսակ արշավի բնույթ ստացավ մեր հայրենիքում:

Այդ արշավը պետք է նկատել այն ընդհանուր շարժման շրջագծում, որը Հոռոմեական Կաթոլիկ Եկեղեցին, Վատիկանի գլխավորությամբ, և Եվրոպայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների Բողաքական Եկեղեցիները, տարբեր շարժառիթներից և նպատակներից մղված, հատուկ ծրագրված քաղաքականություն և գործունեություն են սկսել ծավալել Արևելյան Եվրոպայի ամբողջ տարածքում իբրև գործունեության գլխավոր դաշտ ունենալով նախկին խորհրդային Միությանը մաս կազմած և կամ նրան արբանյակ նկատված երկրները: Այդ արշավը չափազանցված և անհավասարակշռելի համեմատությունների է հասել «քրիստոնեական», «ավետարանական» անուններով կամ նույնիսկ ոչ-քրիստոնեական նկարագրով կրոնական և կրոնաինստատսիրական շարժումների մոտ, որոնք ուժգին թափով ու ալլազան

եղանակներով լծվել են այսպես կոչված ավետարանչական առաքելության (évangélisation):

7. Մեր հայրենիքի շրջագծում նկատի ունենք հետևյալ պարագաները.

ա) **Հայ Կաթոլիկ Եկեղեցին**, որն իր գործունեությունն սկսեց մեկնելով այն տվյալից, թե Հայաստանում, նախքան նրա խորհրդանշանը, կային հայ կաթոլիկ հավատացյալներ, մասնավորաբար հյուսիս-արևմտյան շրջանի մի շարք գյուղերում, և թե այժմ, կրոնական, մարդկային ազատության այս նոր պայմաններում, նրանք վերադարձած լինելով իրենց կրոնական ինքնության գիտակցությանը՝ հայ կաթոլիկ Եկեղեցու հոգևոր խնամատարության կարիքն ունեն:

Առ այդ Մխիթարյան Միաբանությունից ուղարկվեց հոգևոր հովիվ և այսպես նշանակվեց Առաջնորդ, դարձյալ Մխիթարյան Միաբան Հայրերից:

Հայ կաթոլիկ հավատացյալների հոգևոր խնամք տանելու գործը ներառնված է Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու՝ Վատիկանի ընդհանուր գործունեության մեջ, այս մարզից ներս:

բ) **Հայ Ավետարանական Եկեղեցին** էլ, այս նույն տեսակի բնագավառում, նորոգված թափով առաջ է տանում իր գործունեությունը: Նույնիսկ խորհրդային իշխանության շրջանում, Հայ ավետարանական մի փոքրիկ համայնք գոյություն ուներ Երևանում: Հայ ավետարանական Եկեղեցու գործունեությունը ներկայումս առավել շեշտ է ստացել՝ տարածվելով նաև Հայաստանի այլ շրջաններում:

Բնականորեն, Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցությունը իր օժանդակության բաժինն է բերում Հայ Ավետարանական Եկեղեցուն պատկանող հավատացյալների հոգևոր մատակարարման գործին:

գ) **Ապստեղեցական շարժումներ և կազմակերպություններ** (պարզապես օրինակ տված լինելու համար հիշենք Եհովայի վկաներին, Հոգեգալլստականներին, Մորմոններին, Նազարեթականներին), որոնք ծայրահեղ մոլեռանդությամբ հատկանշված աղանդներ են, գլխավորաբար Արևմտյան աշխարհից, հատկապես ծնունդ առած Միացյալ Նահանգներում և Եվրոպայում, բառիս բուն իմաստով քարոզչական արշավ են սկսել Հայաստանի ամբողջ տարածքում, այս աճառ ո՛չ թե գոյություն ունեցող իրենց հետևիկների (պարագա, որ իրականում չկա) կրոնական կարիքներին գոհացում տալու առաջադրությամբ, այլ նոր հետևորդներ «շահելու» հստակ նպատակադրությամբ, պարզ ասած, մարդորսություն կատարելու, հավատափոխություն առաջ բերելու դիտավորությամբ, շահագործելով կրոնական ազատության սկզբունքը, որը արդեն ճանաչված օրենք է մեր հայրենի պետական իշխանությունների կողմից:

դ) Կամ նաև այլ շարժումներ ոչ-քրիստոնեական, քրիշնաչական, հայեցողական, օտար աշխարհներից ներմուծված, նույնիսկ հեթանոսական գաղափարախոսությունների և հին ավանդությունների ծնունդ հռանքներ, որոնք սանձարձակ գործունեությամբ իրենց գաղափարներն են փորձում տարածել մեր ժողովրդի կյանքում:

8. Չի՛ կարելի այլևս անտարբեր մնալ այս բոլոր երևույթների և շարժումների դիմաց: Ի՞նչ դիրք պետք է ճշտի Հայաստանյայց Եկեղեցին այս բոլորի նկատմամբ:

Նախ, որևէ կեցվածք կամ վերաբերմունք ճշտելուց առաջ, որպես կենսական և ընդհանրական մեկնակետ-սկզբունք պետք է հաստատել և որդեգրել այն պատմական անհերքելի ճշմարտությունը ու միանգամայն այժ-

մեական իրողությունը, որ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՄԱՆ ԱՇԽԱՍԱՆՔԻ ՄԻ ՄԱՐԶԱՂԱՍԵՏ ՉԷ: Պարզ խոսքով, «Ֆեթանու» (ոչ-քրիստոնյա) մի աշխարհ չէ և առաքելության դաշտ չէ (mission field), այս բառի ընթացիկ իմաստով: Հայաստանը քրիստոնեացված երկիր է, շուրջ երկհազարամյա քրիստոնեաշունչ կյանքով, քրիստոնեատիպ նկարագրով ու քրիստոնեադոշմ մշակույթով թրծված: «Հեթանու»-ների երկիր չէ: Նահատակների երկիր է, սրբերի աղոթքով թաթախված և մարտիրոսների արյունով ոռոգված: Քրիստոսի Ավետարանը կարելի է կարդալ Հայաստանի քարերի և հողերի վրա, Քրիստոսի հավատքը կարելի է ուսանել մազադաթների, մանրանկարների, մատյանների, խաչքարերի, հուշադրությունների, քանդակների, տաճարների վրա կենդանի շնչով փորագրված իր պերճաբարբառ պատկերից: Քրիստոնեական կյանքի սկզբունքները կարելի է բաղել հայ ժողովրդի կյանքի հասկացողության և ապրումի այլազան արտահայտությունների՝ բարբերի, սովորությունների, ընտանեկան, ընկերային-ազգային ավանդությունների և ամբողջ կենցաղակերպի միջից, մի խոսքով՝ հայ կյանքի ողջ հյուսվածքի ու շաղվածքի միջից:

9. Եվ այստեղ էական է շեշտել, որ սա սուկ անցյալի ժառանգություն չէ. ներկայիս ապրվող և շարունակվող ճշմարտություն է: Քրիստոնեությունը հայության համար կմնա միշտ «իբրև զգույն ի մորթոյ», ինչպես երեկ, նաև այսօր ու առհավետ:

Խորհրդային Միության յոթանասունամյա բռնատիրական իշխանությունը բնականորեն իր ժխտական ազդեցությունները ունեցավ մեր հայրենիքի ժողովրդի կյանքի վրա, ինչպես նաև Խորհրդային Միությանը մաս կազմող բոլոր հանրապետությունների ժողովուրդների վրա: Բայց այդ ազդեցությունները հայ ժողովրդի հոգուց ու կյանքից չկարողացան ջնջել քրիստոնեական հավատքը և չհաջողեցին երբեք արմատախիլ անել այն մեր Մայր Հայրենիքի հողից, որի վրա Քրիստոսի հետքերը կան իբրև «դրոշմ անջնջելի», «կնիք անխախտելի» և որպես աղբյուր մշտանորոգ վերակենդանության:

Կրոնական տեսակետից ինչպիսի՜ պերճախոս վկայություններ կան հավատքի կենդանության մասին, որն հաճախ և պնդում լուր կերպով արտահայտվեց մեր հայրենի աշխարհում անցնող յոթը տասնամյակների ընթացքում: Նախկին Խորհրդային Միության իշխանության տակ ապրած երկրների— և նրանց շարքում՝ Հայաստանում— սխրալի դրվագների վկայություններ ի հայտ պիտի գան քրիստոնեական այդ հավատքի կենդանության ու նրա պահպանման հերոսությունը պատմող:

10. Հետևաբար, Հայաստանը նկատել որպես քրիստոնեության քարոզչության համար բաց և խուպան դաշտ՝ ամեն բանից առաջ՝ նշանակում է մեղանչել ճշմարտության և իրականության դեմ: Առավել ևս, սիրո, հարգանքի և ճանաչման թերացում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և լուսավորչասնունդ հայ ժողովրդի հանդեպ, որը—չմոռացվի— աշխարհում առաջին ազգը եղավ քրիստոնեությունը իբրև ազգային պետական կրոն հռչակող ժողովուրդ: Անտեր չէ այս երկիրը. Քրիստոս գահակալում է այստեղ. Իր իջման սուրբ Սեղանը որպես սրբություն սրբոց ճառագայթում է այստեղից: Լքված հող չէ այս երկիրը. անգույն չէ այս ժողովուրդը. անցանկապատ չէ Տիրոջ այս աչքին: Ծուրջ երկու հազար տարիներ քրիստոնեության լույսը վառ է պահվել այս երկրում, հակառակ հաճախակիորեն նրա վրա փոթորկած մրրիկների: Լուսավորչության և ջահագնացության ու

խաչ-ակրության այս գործը կատարողն է եղել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որի վկայությունները այնքան հաճախակիորեն և համաշխարհայնորեն ճանաչվել են ու հռչակվել բազում ազգերի պատմաբանների կողմից:

11. Մեր Եկեղեցին այսօր էլ, և՛ առավել ուժգնությամբ ու արդյունավետությամբ, շարունակում է իր առաքելությունը: Անտեսել այդ Եկեղեցու աստվածավանդ կոչումն ու դերը՝ ճշմանակում է մեղանշել քրիստոնեական եղբայրության, միության ու միասնության և իրալ, ճշմարիտ **Էկումենական** ոգուն, հասկացողության ու վերաբերմունքի դեմ:

12. Պատմությունը հատկորեն և լայնորեն վկայում է, որ քրիստոնեական Եկեղեցիները միշտ տառապել ու անհարկի վնասվել են անիմաստներին մրցակցությունների, հակամարտությունների, մարդորսական գործունեությունների հետևանքով: «Բյուզանդական վեճ»-երի դարը քրիստոնեական Եկեղեցու կյանքում վաղուց է փակվել: Նախկին դարերի միսիոներական գործունեության վնասաբեր կողմերը կրկնելը, «բյուզանդական վեճ»-եր վերարձարծելը՝ ճշմանակում է ոչինչ սովորած չլինել պատմությունից և ոչնչով չնպաստել քրիստոնեական Եկեղեցու միության ու համայնական առաքելության գործին, որը 20-րդ դարի այս վերջին տասնամյակում և բացվող 21-րդ դարում այնքան կենսական ճշմանակություն ունի համայն աշխարհի համար:

13. Մի այլ կարևոր ճշմարտություն ևս պետք է նկատի ունենալ Հայաստանյայց Եկեղեցու դիրքը ճշտելու տեսակետից.—

— Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հավատքից և առաքելությունից անբաժան է նրա **ազգային** նկարագիրն ու դերը: Պատմական իր կյանքից ժառանգված իրողություն է սա: Հայաստանյայց Եկեղեցին իր դարավոր գոյությամբ ու գործունեությամբ շաղախված է հալ ժողովրդի կյանքի, մշակույթի և ճակատագրի հետ: Այս օրերին, մանավանդ անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո, հալ ազգն ու պետությունը գտնվում են ամենադժվարին կացությունների առջև, տնտեսական, ընկերային, ներքին վարչական-վերակազմակերպական, ապահովական, քաղաքական, փոխ-հարաբերական մարզերում: Հեշտ չէ յոթանասուն տարիների բացարձակատիրական ճնշիչ վարչակարգից դուրս գալը և նոր ու ժողովրդավար վարչական և պետական ու հասարակական կյանք ստեղծելը: Հսկայական զոհողությունների, հարստ ջանքերի, գերմարդկային ճիգերի, հոգեկան, բարոյական բարեփոխման, տնտեսական և մարդկային աղքատների հայթայթման ու ստեղծման հրամայական և ծանր կարիքների առջև է կանգնած հայրենիքը՝ իր պետական կառույցներով, իր հասարակական բոլոր տեսակի հաստատություններով ու ժողովրդի բոլոր խավերով ամխտիր:

— Արցախի հայության ինքնորոշման արդար, բայց խորհրդային կարգերի ներքո իրեն զլացված իրավունքի ձեռք բերման նվիրական և անժամանցելի ու անհետաձգելի պարտքը վերածվել է համայն հայության դաժաշոցներով տեղահանվածների և գաղթի մատնվածների, նահատակված քաջամարտիկների, անգն ու անմեղ ժողովրդի զոհերի կորստի և նրանց ընտանիքների, հարազատների մխիթարության ու աջակցության կարիքները մեզ դնում են հրամայական ու անհետաձգելի պարտավորությունների առջև:

— 1988-ի Լեհիսկականի շրջանի երկրաշարժի առաջ բերած «աղետի գոտու» վերակառուցման ու հարյուր հազարավոր անտուն մնացած քաղա-

քաղցիների վերաբնակեցման և կեցության անհրաժեշտությունը, դեռ բազում այլ նույնատեսակ կարիքներ Ադրբեջանի այլ քաղաքներից տեղափոխված և Հայաստանի տարբեր շրջաններում ժամանակավոր ապաստան գտած ժողովրդի հետ կապված՝ ողջ հայ ժողովրդին դրել են ամենածանր դրության մեջ:

Ահա այսպիսի պայմաններում, հայության ազգային միասնությունը առօրյա հացի չափ կենսական անհրաժեշտություն է: Ներքին պառակտումները խորթ են ազգաշինության և հայրենակերտության մեր համահայկական պարտավորությանն ու առաքելությանը:

Հայաստանյայց Եկեղեցին, իբրև մեր ժողովրդի ազգային Եկեղեցին, հայության միության և գործության ամրապնդիչ հոգևոր-կրոնական կովանն է: Հետևաբար, կրոնական կյանքի բնագավառում նոր տարախմբումների, նոր խմբակցությունների ստեղծումը կամ զարգացումը ապահովաբար վնաս կբերեն մեր ազգության միության շաղախմանն ու սերտացմանը, մասնավոր ալմախի շարժումներ, որոնք **ապազգային** նկարագրեր ունեն և **ապազգայնացնող** դեր են խաղում մեր ժողովրդի կյանքում: Նրանք սպառնում են մի կողմից **քրիստոնեական** միությանը և, մյուս սկողմից, ազգային միությանը, որոնց երկուսին էլ այս օրերին առաջնահերթ անհրաժեշտությունն ունենք:

14. Այս ճշմարտություններից, սկզբունքներից և համոզմունքներից առաջնորդված և հետևելով Առաքյալի պատվերին, թե՛ «**Զգուշ կացեք անձանց և ամենայն հօտիդ, յորում ետ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցուց արեամբ իրով**» (Գործք Առաք. Ի. 23), մեր ժողովրդի զավակներին ենք փոխանցում հետևյալ խոհերն ու հորդորները.

15. Քրիստոնեական սիրտ և ազգային միության զգացումներով ողջունում ենք Հայաստանում մեր Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիներին պատկանող հավատացյալներին ընծայված հոգևոր խնամատարության գործը, որը տնօրինվում է Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիների պաշտոնական իշխանությունների կողմից, իրենց պատմական համայնքների ծոցում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իբրև պատմական իրողություն ճանաչել է Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիները ու եղբայրական ոգով ողջունում է նրանց գործակցությունը: Իբրև աղյախին, մենք բնական ենք գտնում նրանց գործունեությունը ի սպաս իրենց պատկանող հավատացյալների:

Սպասում ենք, որ նրանք հարգելով հայ ժողովրդի դարավոր կյանքի սնուցիչ հոգևոր մոր՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հարազատ ոգին, կարգը, ալմանություններն ու առաքելությունը՝ Մայր Հայրենիքում լիովին գործակցեն նրա հետ, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի միջոցով, և զորացնեն նրա հոգևոր-կրոնական, քարոզչական-դատախարակական և բնկերային-ծառայական գործը, խուսափելով ալմախի զուգահեռ կամ մրցակցական և կամ կրկնողական կառույցներ ու ապաստվորություններ ստեղծելուց և տարածելուց, որոնք անհարկի շփոթություն են ստեղծում հավատացյալների կյանքում և առիթ ու միջոց են դառնում դավանափոխության, որի կարիքը չունեն ո՛չ Քրիստոսի Եկեղեցին և ո՛չ էլ մեր հայրենիքն ու ազգը, մասնավորաբար այս ժամանակներում, երբ էականը, քրիստոնեական

հավատքն է և ոչ թե նրա բանաձևման եղանակը, ու երբ մեր հայրենիքը և ժողովուրդը գտնվում են միության ու միասնության կարգախոսին ունկնդիր:

16. Ընդհանրականության և երախտագիտության զգացումներով ողջունում ենք բոլոր այն օտար քույր եկեղեցիներին, եկեղեցական բարեսիրական և միջ-եկեղեցական օգնության հատուկ կազմակերպություններին, որոնք Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանում 1988-ի դեկտեմբերի 7-ին պատահած ահավոր երկրաշարժի առիթով իրենց լայն և անվերապահ, մեծապես օգտաշատ ու բարձրորեն գնահատելի աջակցությունը և օժանդակությունը ընծայեցին մեր ժողովրդին, քրիստոնեական եղբայրության ու միասնության օրինակելի արարքներով: Հայաստանյայց եկեղեցին չի կարող մոռանալ այն ճշմարտորեն քրիստոնեական և վավերականորեն մարդկային գորակցությունը, որ աշխարհի բոլոր կողմերից օտար քույր եկեղեցիները՝ օրթոդոքս, կաթոլիկ թե բողոքական, առանց խտրության ընծայաբերեցին—և շարունակում են ընծայաբերել—մեր տառապահար ժողովրդին:

Մենք ուրախությամբ հաստատում ենք, որ բազում ման եկեղեցիներ ու եկեղեցական և միջ-եկեղեցական ու բարեսիրական կազմակերպություններ լայնախոհ ոգով և համաքրիստոնեական հարազատ վերաբերմունքով իրենց գործերը կատարեցին ներդաշնակորեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ միասնաբար կամ նրա միջոցով:

Մեր արդար սպասումն է, որ այդ բոլոր կատարված և կատարվող օժանդակությունները, որոնք աստվածահաճո արարքներ են, չծառայեցվեն որևէ ձևով և որևէ չափով կրոնական նեղ, դավանաբանական կամ հարանվանական քարոզչության ու նրա տարածման հատուկ ուղղակի կամ անուղղակի նպատակների: Նման արարքներ նկատում ենք շեղում քրիստոնեական հավատքի ուղիղ հասկացողությունից, Ավետարանի ճշմարիտ ոգուց և մարդկայնական առողջ վերաբերմունքից:

17. Մեզ համար անհասկանալի և անարդարանալի երևույթներ ու անընդունելի գործունեություններ են այն աշխատանքները, որոնք ծրագրված են հետևողական ու տեղագին թափով սկսել են առաջ տարվել ապակե-դեցական, քրիստոնեական կամ ոչ-քրիստոնեական կազմակերպությունների, աղանդների և Ավետարանի անունը շահագործող շարժումների կողմից, որոնք Հայաստան աշխարհը նկատում են որպես բերրի հող իրենց քարոզչության համար: Ի սեր Քրիստոսի և ի սեր մեր ազգի ու հայրենիքի՝ չենք կարող թույլ տալ, որ այդպիսի շարժումներ, երբեմն նույնիսկ «Ավետարանական» բառը գործածող, օտար թե հայ կրոնական ընկերակցություններ, խմբակցություններ ու կազմակերպություններ ավետարանումի (evangelisation) կարգախոսով ներխուժեն Հայաստան և մեր ժողովրդի մեջ, զանազան միջոցներով, հաճախ ոչ-կրոնական և ոչ ուղղամիտ, այլ զարտուղի դրապատճառներով և գործելակերպերով այսպես ասած՝ «քրիստոնեություն քարոզեն» մեր քրիստոսապաշտ ժողովրդին:

Հավատում և սպասում ենք, որ Հայաստանի մե թողովուրդը մեր ազգին բնորոշ գծերից մեկը կազմող ինքնահարգանքի և արժանապատվության զգացումը արթուն ու առողջ կպահի իր մեջ, վաճելու համար ման անձանց և մերժելու ման գործունեությունները, որոնք որոն են ցանում, փուշ ու տատակ սերմանում հայոց «փոքր ածու»-ի մեջ: Նրանք պետք է անդրադառնան, որ քրիստոնեության սերմերը այստեղ ցանվել են քրիստոսաշավիղ

գույգ Առաքյալների կողմից, որ այդ «ածու»-ն ոտոգված է Լուսավորչի կանթեղի արցունքով և մշակվել է Սուրբ Մեսրոպի սրբագիր տառերով: Այդ «հայրատունի այգույն» պահակն ու մշակը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին է եղել դարեր շարունակ առանց խափանման ու ընկրկումի: Եվ այսօր էլ մնում է մույն մշակը՝ իր առաքելության նորոգված գիտակցությամբ, կամքով և գործով:

Քրիստոնեական հավատքը եղծող, քրիստոնեական Եկեղեցին պատակտող այդ շարժումները, ինչ անում էլ որ ունենան, ինչ հարստության տեր էլ որ լինեն, պետք է իսպառ հեռանան և չքանան հայոց աշխարհից: Եթե նրանք նվազագույն աստիճանի իսկ գիտակցությունը և ավետարանական հարազատ հասկացողությունն ունեն քրիստոնեական ավետարանույց առաքելության, անհրաժեշտ է, որ գնան ու ծառայեն այն երկրներում և այն ժողովուրդներին, որոնք Քրիստոսի անունն իսկ չեն լսել կամ չեն ընդունել: Այս է ճշմարիտ առաքելության ուղին, գծված մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի կողմից (տե՛ս Մատթեոսի Ավետարանը, ԻԸ. 19—20):

Ներքին հոգևոր արթնություն ստեղծելը Եկեղեցիների գործն է: Բոլոր նրանք, ովքեր այդ ներքին հոգևոր արթնության ծարավն ու կարիքն են զգում, հարկավոր է, դիմեն իրենց հարազատ մորն ու ստանան հարազատ կաթ, և ոչ թե գնան ու փնտրեն խարդախված կաթ ու ապագայնացնող և հայրենավաճա կերակուր:

18. Աշխարհում ոչ մի Եկեղեցի և ոչ մի պետություն կամ այլ կարգի հասարակական, համայնական կազմակերպություն ու հաստատություն զերծ չէ թերություններից իր գործունեության ընթացքում: Ո՞ր Եկեղեցու, պետության կամ կազմակերպության գործունեությունն է ամբողջովին գոհացուցիչ, լիովին բավարարող: Միշտ եղել են և կան դժվարություններ, հարցեր, թերիներ, թերացումներ հասարակական կյանքի բոլոր կազմակերպական ու գործունեության երեսների և մակարդակների վրա: Ո՞վ է կատարյալ, եթե ո՛չ միայն Աստված:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին էլ նրանց շարքում բացառություն չէ: Ունենք մարդկային ուժի անբավարարություն, պակասում են նյութական գործնական միջոցներ: Բայց այդ բոլորը չեն կարող պատճառ լինել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն զուգահեռ կամ հակընթաց այլ և զարտուղի գործարանավորություններ ստեղծելու քրիստոնեական բարոյության համար: Ընդհակառակը, քրիստոնեական եղբայրության ոգին պարտավորեցնում է բոլոր նրանց, ովքեր սեր ունեն Քրիստոսի և հայ ժողովրդի հանդեպ, որ արտահայտեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնականությունը հոգևոր սպասավորության գորացմամբ, աջակցության այլազան եղանակների գործարարությամբ Հայաստան աշխարհում:

19. Մենք հավատում ենք, որ ներկա ժամանակներում, մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում օրեցօր պիտի զարգանա վերանորոգված հոգևոր և ազգային ծառայության ընթացքը: Արդեն իսկ նկատանելի լայն չափերով սկսված վերազարթոնքի և վերաշխուժության շարժումը, որը շոշափելի արդյունքներով առաջ է գնում, պիտի առավել ևս թափ ստանա ու պտուղ տա «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր» (Մարկոս. Դ. 20):

Այս տեսակետից, մեծապես հուսադրիչ և քաջակերական երևույթ է միասնականության ու համագործակցության ոգու և ուղղության ամրացումն

26-52

ու զարգացումը մեր Եկեղեցու ամբողջության մեջ, արտահայտված բոլոր նվիրապետական Աթոռների սերտ գործակցությամբ:

20. Կոչ ենք ուղղում պատասխանատվության բոլոր աստիճանների վրա գտնվող մեր հոգևորականներին, որ լայնորեն վերաբացվեն և մշտապես բաց պահեն իրենց միտքն ու սիրտը, կամքն ու կյանքը Սուրբ Հոգու ներգործության առջև, վերակենդանացնեն իրենց մեջ առաքելական դարի և մեր Հայրերի առաքելաշախիղ կենսընթացն ու գործընթացը: Սպասում ենք բոլորից, որ անվերապահ և անսակարկ նվիրումով ու զոհողության բարձրագույն աստիճանի գիտակցությամբ լծվեն աշխատանքի, առավել ևս սերտորեն և նախանձակերպով մոտենան հավատացյալ ժողովրդի զավակներին, անձնվեր ու ամբողջանվեր ծառայությամբ հոգ տանեն նրանց հոգևոր և մարդկային կարիքներին, նորոգված շնչով հույս, հավատք, սեր, կամք և տոկոսնություն ներշնչեն նրանց, ու քրիստոնեական բարոյականի սկզբունքների և հայկական քրիստոնեական հարազատ ավանդությունների լույսը տարածեն մեր ժողովրդի կյանքում: «Նախանձ տան քո կերիցէ զիս» (Հովհ. Բ. 19) աստվածաշունչ խոսքը թող նոր կյանք առնի բոլոր հոգևորականներին կյանքում:

Վատահաբար այս տեսակետից իր բարերար ազդեցությունը կունենա Ամենայն Հայոց Հայրապետի 1907 թվահամար կոնդակը, որը հրապարակվեց 1992 թ. օգոստոսի 28-ին:

Կոչ ենք ուղղում մեր հայրենի պետության բոլոր պատասխանատուներին, որ աշալուրջ հսկողությամբ գործադրեն որդեգրված կրոնական ազատության օրենքն ու սկզբունքը, թույլ չտան, որ այն շահագործման ենթարկվի այնպիսի գործողությունների ծավալմամբ, որոնք վնաս կարող են բերել թե՛ մեր ժողովրդի հոգեկան ազատությանը և թե՛ մեր Եկեղեցու ու ազգի միությանը:

Կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զավակներին անխտիր, մեծերին և փոքրերին, տղամարդկանց և կանանց, ծերերին և մանուկներին, որ արթուն և մաքուր պահեն իրենց հոգիները և թույլ չտան, որ օտարաձայն և օտարացնող ազդեցությունները, հրապուրիչ խայծերով գործադրված, եղծեն իրենց քրիստոնեական դարավոր հավատքը, որը իրենց հայրերը պահպանեցին իրենց աչքի լույսի պես՝ ի գին իրենց արյան: Թող հայոց «փոքր ածու»-ն, այժմ լիովին հայացած, հարազատացած և անկախացած, մնա անաղարտ, Հայոց Եկեղեցին, Մայր Եկեղեցին մնա հոգևոր առողջության աղբյուր, և ողջ Հայաստան աշխարհը լինի Աստուծո թագավորության սեփական բնագավառ հայ ժողովրդի համար:

Վերհիշեցնում ենք բոլորին Պողոս Առաքյալի ուղեցույց-պատգամը. «Այսուհետև զօրացարուք Տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա: Եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ... զի կարող լինիջիբ ի դիմի հարկանել չարին յաւորն չարութեան: Եւ իբրև զգամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կաջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և զգեցեալ զգրահսն արդարութեան: Եւ ազուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան...» (Եփես. Զ. 10—17):

Թող բարձրալն Աստված, իր երկնային իմաստությունն ու շնորհը, սերն ու հավատքը և իր վերանորոգիչ Սուրբ Հոգու զորությունը պարգևի բոլորին, հոգևորականաց և աշխարհականաց, որպեսզի միահամուռ համալ-

նությանը և անխախտելի ու անշեղելի հավատարմությանը, մեր պատմության այս վճռական և դարձակետային պահը պատվով և փառքով արժևորենք:

Ողջ լերուք ի Տեր, զօրացեալք ի Հոգւոյն Սրբոյ և յաւիտ օրհնեալ յԱստուծոյ և ի Մէնջ. ամէն:


ԳԱՐԵԳԻՆ Բ.


ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ

ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

30 Օգոստոս 1992 թ.
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ






ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով օգոստոսի 24—31 օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ խորհրդակցելու Հայաստանում կրոնական իրավիճակի և եկեղեցական կյանքի, ինչպես նաև «Հայաստան» Հիմնադրամի մասին: Բազմօրյա խորհրդակցությունները արդյունավորվեցին շատ կարևոր մի փաստաթղթով, որ անվանվեց «Հայրական խոսք հայ ժողովրդին» (տես էջ 7): Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետն ու Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը մտահոգություն են հայտնում աղանդավորական շարժումների թափանցումով ի Հայաստան և ժողովրդին կոչ անում հավատարիմ մնալ Մայր եկեղեցուն և նրա ավանդությանը:





ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ

Ժ Ե Լ


Վշտահար սրտով դիմում ենք Ձեզ՝ հայտնելու համար, թե Ձեզ քաջ ծանոթ ողբերգական վիճակը Լեոնային Ղարաբաղում ոչ միայն շարունակվում է, այլև աղբյուրահեղձանական կողմը վերջին մեկ տարվա ընթացքում տևապես կրակի տակ է պահում Հայաստանի Հանրապետության արևելյան սահմանամերձ գյուղերը, իսկ օգոստոսի 7-ի և 8-ի օրերին ուղղակի հարձակում են գործում և գրավել են մեր Հանրապետության հողամասը հանդիսացող Արծվաշեն մեծ հայկական գյուղը՝ տեղահան անելով ամբողջ բնակչությունը և մեծ զոհեր պատճառելով: Նաև օգոստոսի 8-ի երեկոյան ուրբակոծել են Հայաստանի Գորիս քաղաքը՝ պատճառելով տասնյակ մեռյալներ: Սրանք բացահայտ ագրեսիաներ են և ոտնահարում են միջազգային օրենքները (նորմաները), այն էլ Հոռմի ժողովից անմիջապես հետո, ուր, ինչպես գիտեք, հավաքվել էին արևմտյան պետությանց ներկայացուցիչները Լեոնային Ղարաբաղում զինադադար հաստատելու ծրագրով: Կարծում ենք, որ արդեն մեր երկրի արևելյան հարևանը կամենում է պատերազմի մեջ քաշել Հայաստանը և սպառնալ նրա բնակչությանը: Այս պայմանների մեջ Մենք կոչ ենք անում Ձեզ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, որ ի գործ դնի իր ամբողջ հեղինակությունը կանխելու համար պատերազմը և պարտադրելու, որ երկու կողմերն էլ ցած դնեն զենքերը, և ստեղծվի մի զինադադար, արդար մի լուծում գտնելու համար Լեոնային Ղարաբաղի դժբախտ հայության ողբերգական ճակատագրին: Թող Աստված օգնական լինի Ձեզ և օրհնի Ձեր մարդասիրական առաքելությունը մեր օրերի փոթորկալի աշխարհում:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. Էջմիածին,

11 օգոստոսի 1992 թ.



ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Նախագահության պալատ—Երևան

Խորին գոհունակությամբ տեղյակ դարձանք, որ հաճած եք ստանձնել փոխնախագահի հույժ կարևոր պարտականությունները, ներառյալ «Հայաստան» Հիմնադրամի վերին ղեկավարությունը, մի առաջադրանք, որ առանձնապես խոսում է Մեր սրտին: Ընդհանրապես եկեք Ձեզ և մի անգամ ևս հավաստիացնում Ձեզ, որ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռու պիտի շարունակի իր նպաստը բերել հիմնադրամի գործի Լիակատար հաջողության համար՝ հոգուտ մեր վերածնված անկախ Հանրապետության:

Ցանկանում եմք Ձեզ Լիակատար քաջատղջություն և իրագործում Ձեր բոլոր հայրենանվեր ծրագրերին:

Խորին գնահատանքով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

31 հուլիսի 1992 թ.



ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կառավարական պալատ—Երևան

Հայ Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունից շնորհավորում ենք Ձեր նոր բարձր պաշտոնը, որով ստանձնում եք հույժ պատասխանատու պարտականությունները մեր Հանրապետության վարչապետի:

Մաղթում ենք Ձեզ ի Տեսնեն անապատ եռանդ և լավատեսության ոգի՝ հաղթահարելու Ձեր առջև ծառացած բոլոր դժվարությունները և իրականացնելու Ձեր բոլոր հայրենաշեն ծրագրերը:

Մենք ու մեր Ազգային Եկեղեցին ի Հայաստան և ի Սփյուռն աշխարհի կմնանք աղոթող Ձեզ համար և միշտ պատրաստ մեզ բաժին ընկած պարտականությունները ի կատար ածել Ձեզ հետ գործակցաբար:

Խորին հարգանք և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

31 հուլիսի 1992 թ.




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՏԻԱՐ ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիար Խոսրով Հարությունյանը պատասխանատվության բարձր գիտակցությամբ այդ պատվաբեր պաշտոնը ստանձնելուց հետո այցելեց Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսին՝ ստանալու Վեհափառ Հայրապետի Օրհնությունը:

Հանդիպման ընթացքում մեծարգո վարչապետը Վեհափառ Հայրապետին տեղյակ պահեց Հանրապետության իրավիճակին և հույս հայտնեց, որ համատեղ ջանքերով հայրենիքը դուրս կբերվի տնտեսական և քաղաքական դժվարություններից:

Վեհափառ Հայրապետը հաստատեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու անասկարկ պատրաստակամությունը Հայ Եկեղեցուն բաժին ընկած պարտականությունները ի կատար ածելու վերաբերյալ:





ՄՈՒՐԷ ԷՋՄԻԱԾԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց ոխտալորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հակոբ քնն. Գյուկչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Օգոստոսի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց ոխտալորաբար Մայր աթոռում գտնվող Տ. Մեսրոպ քնն. Սարաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Օգոստոսի 16-ի-ն, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով ա. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը:

Հավարտ ա. պատարագի հանդիսավորությամբ կատարվեց խաղողի օրհնություն:

* * *

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբղ. Զիրեկյանը:

Հավարտ ա. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն անջեցելոց»:


* * *

Օգոստոսի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տօն գիտի գօտոյ Սրբունոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլիճյանը:



Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆԻ ԱՂՈԹՔՆ Ի ԴԵՄՍ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ

Ամենակալ անարատ Աստված՝ անսկիզբ Հայր՝ անտեսանելի, անքովանդակելի, անպատմելի, անպարագրելի, անփոխարինելի, անիմանալի, անհասանելի:

Որ միայն Դու՝ ամմատչելի լույսի մեջ բնակվածդ, ամմահություն ունես:

Որ Քո խոսքով ստեղծեցիր երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը և դրանց մեջ եղած բոլոր արարածներին, և Քո Հոգով գոյացան բոլոր ստեղծվածները:

Եվ մարդկային ազգի նկատմամբ Քո անչափելի սիրո պատճառով ողորկեցիր Քո Միածին Որդուն՝ փրկելու մեզ Ադամի անեծքից:

Նա, որ երկնքից իջնելով, Սուրբ Հոգով մարմնացավ սուրբ և անարատ Լույս Մարիամից, և մարդկային բոլոր կիրքերը կրելով, բացի մեղքից, ազատեց մեզ մեղքի բեռից:

Եվ մեզ համար խաչի ու մահվան համբերելով, մեզ փրկեց սատանայի ծառայությունից և կոտրեց երկրպագությունից:

Եվ մեզ տվորեցրեց ամենասուրբ Երրորդությանդ գլուխ և ծունր խնամարեւ, աղոթք մատուցել և մեղքերի թողություն խնդրել:

Եվ հարությունից հետո զանազան նշաններով քառասուն օր երևաց Իր աշակերտներին՝ նրանց հետ հացով հաղորդվելով՝ կենսաբեր տնօրհնության հավատքի հաստատության համար:

Եվ Իր հարության քառասուներորդ օրը երկինք վերանալիս, ձեռքը դրեց աշակերտների վրա և օրհնեց՝ նրանց տալով առաքիճության կատարյալ շնորհները:

Եվ նրանց միտքը բացեց՝ հասկանալու գրքերը, և նրանց պատվիրեց մնալ Երուսաղեմում, սպասել աստվածային խոստմանը և երկնավոր ու մարդասեր Հոր ավետիսին:

Դու, Տեք, Քո անսահման ողորմության շնորհները պարգևեցիր մարդկային ազգին:

Ողորկեցիր Քո Էակից ու փառակից Սուրբ Հոգուն մեծ կիրակի օրը՝ Փրկչի զարության հիսուներորդ օրվա լրանալուց՝ երրորդ ժամին, երբ նախահայր Ադամը Սուրբ Հոգովդ գոյացավ որպես կենդանի հոգի՝ աստվածային փշմամբ, ապա պտղի ճաշակումով կորստյան մատնվելով և մահա-

նալով, այս ժամին վերստին է կենդանաստեղծվում՝ Սուրբ Հոգուդ իջմամբ առաքյալների դասի մեջ:

Որը հրեղեն լեզուներով երևալով, նստեց նրանց վրա և լցրեց նրանց ամենատառ շնորհով՝ խոսելու բոլոր լեզուներով և լսողների մոտ միաձայն սպասավորելով Սուրբ Հոգուդ, որով և որպես առաջին ծնունդ ծնելով երեք հազարին՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանք առաջինը երկըր պագեցին սուրբ Երրորդությանդ:

Որոնց հետ և մենք այսօր խոնարհեցնում ենք մեր ծնկներն ու պարանոցները և աղաչում ենք Քո առաքյալների հետ. ընդունիր վերջիններիս հետ մեր և նրանց երկրպագությունը, ովքեր նույն արժանավորությամբ խորհրդաբար երկրպագել են Քեզ մինչև այժմ:

Լսիր մեզ մեծ Պենտեկոստեի այս օրը, երբ Սուրբ Հոգիդ ուղարկեցիր ստորինների մեջ՝ Քո որդի Հիսուսի երկինք համբարձվելուց հետո, և երբ հավատով դիմում ենք Քեզ:

Քո սրբության բարձունքներից նայիր Քո ժողովրդին, ովքեր կանգնած են Քո առջև և Քո մեծ ողորմության ակնկալությունն ունեն:

Ուղարկիր այսօր բարերար Սուրբ Հոգուդ Քո տաճարի և նրանում հավաքվածների մեջ, ինչպես այն ժամանակ ուղարկեցիր վերնատանը՝ առաքյալների մեջ:

Որովհետև այստեղ նույնպես Քո Միածին Որդին մշտապես պատահալովում է, ինչպես վերնատանը, որտեղ սուրբ խորհուրդն ավանդելով՝ աշակերտներին բաշխեց խորհրդավոր ընթրիքի ժամանակ և նրանց ոտքերը լվաց և երեսց փակ դռներով վերնատանը՝ հարության երեկոյան առաջին կիրակի օրը, և դարձյալ՝ ութերորդ օրը:

Եվ Պենտեկոստեի օրերի ավարտին Սուրբ Հոգիդ, հողմի փչումով իջնելով, այն լցրեց հրով՝ իր մեջ սուրբ միաբանվածներով հանդերձ:

Որի համար փառավորում ենք Քեզ, բարերար Տեր, մեր Տիրոջ՝ Հիսուս Բրիտուսի Հայրը, և աղաչում ենք Քեզ ամբողջ սրտով, բաղքությամբ նայիր մեզ, գթությամբ և ողորմությամբ հիշիր Քեզ ապավինածներին, տառապածներին ու դատապարտվածներին, շրջիր բանասերկուի կողմից բանտված մեր ոգիների գերությունը և կանգնեցրու ընկածներին ու կործանվածներին:

Աղաչում ենք Քեզ, մարդասեր Տեր, որովհետև թեպետ և մեղանչեցինք, սակայն ավազանի արգանդից դեպի Քեզ դարձանք, և Դու ես մեր Աստվածը. մեզ բաց մի թող Քո ձեռքից, որովհետև ունայնության մեջ նվազեցին մեր օրերը, մենք նախատվեցինք թշնամիներից և մեզ ատողների համար ծաղր ու ծանակի առարկա եղանք:

Այլ հուսալով Քո ողորմությանը, որ այս օրերին եղավ, հայցում ենք Քեզանից, մեր առջև բաց արա Քո ողորմության դուռը և սրբիք մեզ մեր մեղքերի գաղտնիքներից:

Տես Քո ծառաների խոնարհությունը և թողությունն տուր մեր կամա և սկամա, գիտակցաբար ու անգիտակցաբար կատարած բոլոր հանցանքներին:

Քավություն շնորհիր Քո ժողովրդին և ամենքին մաքրիր Սուրբ Հոգուդ գործությամբ:

Փրկիր մեզ թշնամու բռնությունից և մեր կյանքն ամուր պահիր բանասերկուի չարահմար որոգայթների դեմ:

Խաղաղության հրեշտակին հանձնիր մեզ, Դու որ նախքան մեր հայ-
ցելը, պատրաստում ես մեր պետքերը:

Արժանացրու մեզ խոստովանությամբ ու ապաշխարությամբ դառնալ
դեպի Քեզ՝ նախքան մեր վախճանը:

Սուրբ Հոգուդ ընդունելության տաճար դարձրու բոլորին՝ սուրբ առաք-
յալների հետ, և մեր անունները նրանց հետ միասին գրիր կենաց գրքում:

Մեզ ամենքիս ժողովիր Քո արքայության մեջ վերին Սիոնում՝ երկնային
ու բարձրագույն վերնատանը: Որովհետև Քոնն է ողորմությունը, և Քեզ և
Քո Միածին Որդուն և Սուրբ Հոգուդ ենք փառք վերադառնում այժմ և միշտ
և հավիտյանս հավիտենից. ամեն:

2

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ Քո խաղաղությունը շնորհեցիր Քո
առաքյալներին՝ փշելով նրանց վրա, և սուրբ Հոգիդ այսօր հայտնապես
պարգևեցիր նրանց: Որը գալով Հորից՝ բնակվեց նրանց մեջ, նրանց
տրտմությունը փարատեց և հրեղեն լեզուներով նրանց լեզուների վրա հանգ-
չելով, նրանց բերանները բացեց՝ խոսելու բոլոր լեզուներով:

Եվ բոլոր մարդկանց, որոնք աշտարակից բաժանվել էին բազմաստ-
ված մոլորություններով, միավորեց ճշմարիտ երեքանձնյա զորությանդ մեկ
աստվածագիտությամբ, սովորեցրեց բոլոր լեզուներով մեկ Աստծո փառա-
վորել՝ ողջ տիեզերքում ավետարանի քարոզությամբ, և ծունկ խոնարհեց-
նել միայն նույն Աստծուն, ինչպես այսօր մկրտությամբ նոր ծնված երեք
հազարը:

Որոնց հետ և մենք՝ նույն Հոգով լուսավորված, հավատով ծունկ ենք
խոնարհում ամենատուրք Երրորդությանդ առջև և աղաչում ենք՝ միաբան
հավաքվածներս:

Նայիր ինձ՝ անարժանիս, որ ժողովրդի աղոթքը Քո սուրբ սեղանի
առջև Քեզ եմ մատուցում:

Բաց արա, Տեր, իմ՝ մեղավորի շուրթերը, ինչպես երանելի առաքյալ-
ներինը, և լցրու մեզ Քո Սուրբ Հոգով՝ Քեզանից տրված բոլոր շնորհները
հաղորդելու Քո ընտրյալներին: Եվ իմ բազում մեղքերի պատճառով մի առ-
գելիր Քո ողորմությունը մեզանից, որ հույսով կանգնած ենք Քո առջև և
Քո անբավ գթությունից ենք հայցում:

Քո ծառաներին արժանի արա աստվածային պարգևներիդ. իմաստու-
թյան ու հանճարի, խորհրդի ու զորության, գիտության ու աստվածապաշ-
տության և Քո երկյուղի հոգով լցրու մեր մտքերը, և մեր մեջ սուրբ սիրտ,
ուղիղ հոգի և մաքուր միտք նորոգիր, մարդասեր:

Դու, որ նավահանգիստ ես նավողների համար, Քո սուրբ Հոգով մեր
ընթացքն ուղիղ անքիժ ճանապարհի մեջ՝ միշտ խորհելու Քո օրենքի
վրա, պահելու Քո պատվիրանները, կատարելու Քո հրամանները և քա-
րոզելու Քո խոսքերը: Մե աղոթքներն ու խնդրանքները բարությանբ ավար-
տիր:

Դու, որ մեր ախտահարված բնությունը միացրեցիր Քո անախտ աստ-
վածությանը, և դրանով մեր կարիքներին հաղորդակից եղար և մեր ախ-
տերը բժշկեցիր:

Լիր մեզ, մեր փրկիչ Աստված, և խոնարհեցրու Քո ականջը դեպի Քո

սուրբ եկեղեցում հավաքվածներին երկրպագությունը՝ սուրբ վերնատան Քո ընտրյալների նմանությամբ:

Սրբի մեզ մեղքերի բոլոր պղծություններից և սուրբ Հոգու ողորկի միաբան հավատացյալներին մոտ, որպեսզի բնակվի մեր մեջ, լուսավորի մեր մտքերը աստվածգիտության լույսով, առաջնորդի մեզ քո պատվիրաններն ամենայն ճշմարտությամբ պահելու և դարձնի աստվածային կտակարանների օրենսգետ, որը խոսեցին մարգարեները, առաքյալներն ու վարդապետները՝ Սուրբ Հոգու միջոցով, և որը մեզ սովորեցնելու ու գորացնելու է՝ ամեն ինչ կատարելու:

Աղաչում և պաղատում եմ Քեզ, որպեսզի հաշտությամբ նայես Քո ժողովրդին՝ ի գին Քո սուրբ արյան. իմ բազում հանցանքների պատճառով մի անտեսիր սրանց հայցվածները, որովհետև Քո փրկածներն են և դեպի Քեզ են ձեռքերը բարձրացնում ու հաշտություն խնդրում:

Արդ, ընդունիր սրանց մաղթանքների ծնրադրումն ինչպես նոր լուսավորվածներինը, և սրանց ձեռքերի համբարձումն ընդունիր որպես երեկության պատարագ, իսկ սրանց աղոթքները՝ որպես անուշահոտ խումկ Քո բարերար Տերության առջև, և Քո թևերի հովանու տակ ծածկիր սրանց՝ պահելով երևելի ու աներևույթ թշնամիներից:

Որպեսզի անարատ քրիստոնեությամբ ապրելով այս աշխարհում, Քո բոլոր սրբերի հետ արժանի լինենք երկնային կյանքիդ, և գոհանալով փառավորենք Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

3

Դու, որ գործությանց Տեր ես, Աստված ճշմարիտ, լույսի և կյանքի աղբյուր՝ անքննելի կերպով բխելով Հորից, հրաշագործ Սուրբ Հոգի, որը սուրբ առաքյալներին խոստացավ մեր Աստված՝ Քրիստոս, Նա, որ մահվամբ մահվան կապանքները քանդեց և մեղքերի սկզբին անլուծանելի կապանքներով արգելափակեց անշեջ հրի ու արտաքին խավարի մեջ՝ այնտեղ ամուր փակելով պիղծ վիշապին՝ իր ապստամբ գործության հետ միասին, և այնտեղ բանտարկված Ադամի որդիներին՝ անշեցյալներին, դուրս հանեց դժխքից՝ Իր հարությամբ:

Եվ մեր բնությամբ հանդերձ բարձրանալով Հոր մոտ, բոլոր բարիքների ալարտին ու բոլոր խորհուրդների կատարման ժամանակ Քեզ՝ նորոգող ու կենդանարար սուրբ Հոգուդ, տրտմածներին մխիթարիչ ողորկեց:

Դու՝ Աստված, որ խոնարհվեցիր Հայր Աստծուց և եկար վերնատուն, Դու, որին երկինքը չէր կարող տանել. և անճառելի խնդությամբ ու շնորհներով լցրեցիր Քո ընտրյալներին, որոնց ողորկեցիր ողջ աշխարհում կենաց խոսքը քարոզելու:

Որոնք ողջ տիեզերքը լցրեցին Քո գիտությամբ, Տեր, և մեկ Աստվածությունդ ճանաչել տվեցին ողջ աշխարհին՝ վերացնելով կուռքերի սնուտի պաշտամունքը:

Սուրբ ավազանով հեթանոսներին ծնեցին որպես երկնավոր Հորդ որդեգիրների, և բոլորին ամենասուրբ Երրորդությանդ երկրպագողներ դարձրեցին:

Բոլոր վաչրերում դրեցին սուրբ եկեղեցու հիմքերը և հարդարեցին Քո

փառքի սեղանը, որից անմահական խորհրդով կերակրեցին բոլոր Քեզ հավատացողներին:

Երկիրը երկինք դարձնելով՝ երկրայիններին դասակից դարձրեցին երկնայիններին:

Եվ արդ, մեր Տեր Աստված՝ ողորմած և մարդասեր, լսիր մեր պաղատանքները, որ հայցում ենք Քեզանից, և երկնային հանգստի մեջ ընդունիր մեր ննջեցյալների հոգիները, որոնք լուսավորվելով հոգևոր ծննդյամբ՝ քրիստոնյա անվան արժանացան, և հաղորդվելով աստվածային մարմնին ու արյանը, հավատով ու ուղիղ դավանությամբ հեռացան աշխարհից, որոնց և հիշատակը կատարեցինք այսօր փրկական պատարագի հույսով՝ Քո երևման մեծ օրը:

Ամենակալ Տեր, մահկանացուների ու անմահների Աստված՝ ամեն ինչի արարիչ և կյանքի ու մահվան Տեր, մարմնի խնամող, և հանդերձյալում՝ երկրի բոլոր ծագերի հույս, Դու, որ մեծ Պենտեկոստի տոնի վերջին օրը վերնատան մեջ Քո փառավոր գալստյամբ ուրախացրիր Քո անունով հավաքվածներին, լսիր և այժմ մեր աղաչանքի ձայնը և հիշիր նախկին ճգնջեցյալներին՝ մեր հայրերին ու եղբայրներին, և հանգստացրու Քո սրբերի խորանում՝ լույսի վայրում:

Հիշիր նրանց աղոթքներն ու պաղատանքները և խոստովանությունը՝ կյանքի ու վախճանի ժամանակ, և թողություն շնորհիր նրանց բոլոր հանցանքներին, և բոլորին արժանացրու սպասելու ապագա բարիքի ու փառքի հատուցմանը, որը պատրաստեցիր Քո սիրելիների համար, և նաև նրանց հետ օրհնելու ամենասուրբ Երրորդությանդ:

Եվ մեզ՝ Քո անունով Քո սուրբ տաճարի մեջ հավաքվածներին՝ Քո ամենակեցուցիչ գալստյան օրը երկրպագողներին ու տոնողներին, շնորհիր երկնային խաղաղությունը և մեղքերի հնությունից հոգիների ու մարմինների նորոգում՝ ապաշխարությամբ ու արտաաղբերով վերստին ծնվելու, և բոլորին, սուրբ առաքյալների հետ, զորացրու զգաստությամբ ու արդարությամբ՝ Քո բնակության համար, որպեսզի մեր մեջ չարի համար տեղ և մուտք չլինի:

Հրեղեն լեզուներով սրբիր Քո ծառաների շուրթերն ու լեզուները, որպեսզի արժանի լինենք հոգևոր օրհնությամբ հոգեղենների հետ երգելու, սաղմոս ասելու և ամեն ժամ աղոթելու, սուրբ սրտով և խոնարհ հոգով բանավոր պաշտամունք մատուցելու Քեզ, և սրտի խորքից արտաավալից պաղատանքով Քեզանից քավություն խնդրելու:

Եվ մեր ողջ կյանքն ամրացրու ու Քո երկյուղով պարսպված պահիր չար խորհուրդներից, խոսքերից ու գործերից:

Եվ մեզ արժանացրու ի հաճույս Քեզ ապրելու, մեր ընթացքը Քո կամքի համաձայն ճշմարիտ խոստովանությամբ կատարելու, և ջերմեռանդ զղջումով, փրկական խորհրդի հաղորդությամբ, քահանայական մոտեցումով, նվերներով ու պատարագներով մշտապես Քո սուրբ սեղանի առջև հիշատակ կատարելու :


Ծնկի գալով Քո առջև, աղաչում ենք, մարդասեր Սուրբ Հոգի, որպեսզի նաև մեր հոգիների ընթացքը մարմնական կենցաղի մեջ պահես, որպեսզի աներկյուղ անցնենք և փրկվենք օղային ու պիղծ դևերից, և առաջնորդես դեպի ճշմարիտ երկիր՝ դեպի երանավետ կյանք ու արդարների օթևան, որտեղ սրբերի հոգիներն ուրախությամբ օրհնում են Քեզ, և հաջորդ նորոգ-


ման՝ Քո Հակից Փրկչի գալստյան ժամանակ, արթնացնես բոլորին՝ հրեշ-տակապետի փողի ձայնով ու Աստծո խոսքով:

Իսկ Դու, մեր Աստված և Տեր, Սուրբ Հոգի, երբ հարությամբ ստանաս բոլոր մարդկանց և յուրաքանչյուրին հոգով նորոգես, փրկիր գեհեների սպառնալիքից ու աններելի տանջանքներից և Քո սրբերի բանակին խառնիր Քո անունը սիրողների հետ՝ որպեսզի երկնքի արքայության ժառանգորդներ լինենք:

Եվ մենք՝ Քո բանավոր հոտը և Քեզ հավատացողները, օրհնելու և փառավորելու ենք ամենասուրբ Երրորդությունը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Աշխարհաբարի վերածեց՝
ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ, ԱԶԱՊԱՀՅԱՆԸ





ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Կացարանի իմաստ արտահայտող բառերի բնությունը հետաքրքրական է թե՛ պատմական-մշակութային, թե՛ ազգագրական և թե՛ լեզվաբանական նկատառումներով:

Կացարանները լինում են մարդկանց և կենդանիների, մեծ և փոքր, ընդհանուր և մասնավոր, մշտական և ժամանակավոր, տարբերակվում են ըստ նպատակի (գործառական նշանակության) և այլն:

Կացարան նշանակող բառերի իմաստային մի յուրահատուկ խմբի մասին են հուշում 5-րդ դ. հայ մատենագրությունից հետևյալ բնագրային օրինակները. ... գտորբն Արիստակէս բնակեալ յանապատի, յիրում **մենաւորաստանին** (Ագաթ., էջ 478), շինեաց զայս **կուսաստանս** յամենայն գաւառս (Բուզ., էջ 348), երթեալք երկոքին եղբարքն մտանէին **յեպիսկոպոսանոցն** (Բուզ., էջ 76), հաւատացեալքն ի Բրիստոս ... որ բնակեալ են յիրաքանչիւր **մենանոցս** (Եղ., էջ 104), Զոր բարձեալ աշակերտացն՝ թաղեցին ի **միալնարանի** նորին (Խոր., էջ 326), Ծիմէ և յանապատ և յանմարդ տեղիս **եղբայրանոցս** և **մենաստանս** և **յատկանձնակաց խրճիթս** (Խոր., էջ 336), լետ այսորիկ տենչացեալ կարգի վանականութեան՝ երթայ ի **վանս** բազմութեան եղբարց (Փարպ., էջ 28) և այլն:

Ընդգծված բառերը նշանակում են կացարաններ, որոնք առնչություն ունեն եկեղեցական-հոգևոր կյանքին: Դրանցից վերցնենք, օրինակ, **վանք** «որևէ եկեղեցու շուրջը համախմբված մենակյացների բնակատեղի» բառը: Հայտնի է, որ վանքը կրոնական հաստատություն է՝ ճարտարապետական կառույցների համալիր, որ բաղկացած է լինում, որպես կանոն, պաշտամունքային շինություններից և զանազան այլ կառույցներից, որոնց մեջ մտնում են նաև բնակելի շենքերը՝ կացարանները: Դրանք, անշուշտ, ճարտարապետական հորինվածքով հակադրվում են պաշտամունքային նշանակություն ունեցող կառույցներին՝ որպես աշխարհիկ բնույթ ունեցողներ: Սակայն մյուս կողմից էլ սրանք որոշակիորեն զանազանվում են զուտ աշխարհիկ նշանակություն ունեցող կացարաններից (հատկապես բովանդակային-իմաստային կողմով), ինչպես՝ տուն, պալատ, վրան, խրճիթ, հյուղակ և

այլն: Ծիշտ այնպես, ինչպես ունենք հոգևոր և աշխարհիկ բանաստեղծության, երաժշտության տարբերակումը:

Այս պարագայում, սակայն, տարբերակումը (հակադրությունը) կատարում ենք որոշակի վերապահումով՝ աշխարհիկ նշանակությամբ կացարաններ և կացարաններ, որոնք առնչվում են եկեղեցական-հոգևոր կյանքին:

Սկզբնապես, մինչև հատուկ շինությունների, կառույցների երևան գալը, ճգնակյացներին, մենակյացներին, աստծուն աղոթքներով նվիրաբերվողներին իբրև կացարաններ ծառայել են բնական տարածությունները՝ **քարանձավները, այրերը** և այլն (դրանք եղել են մասնախնայարան մարդու բնակարանները): Հմմտ. Զոր և մարգարեքն յտաշապոյն գործէին, որք ի լերինս և լանապատս, յայրս և ի փապարս վիմաց զաստուածեղէն կրօնիցն զծառայութիւն հարկանէին (Ագաթ., էջ 474), ...որք միանգամ վասն սիրոյն աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի լանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք, յայրս և ի քարածերպս ... ի լերինս շրջէին (Բուզ., էջ 412, 414):

Անհրաժեշտ է նշել, որ կրոնական ուղղվածություն ունեցող կացարանների հայերեն անվանումներն առնչվում են բացառապես քրիստոնեությանը: 5-րդ դարի գրավոր հուշարձաններում չեն պահպանվել նախաքրիստոնեական շրջանին՝ հեթանոսությանը վերաբերող կացարան նշանակող բառեր:

Ներկայացնենք հետազոտվող բառիմաստային խումբը:

Հոմանշային բազմանդամ շարք ունի **վանք** բառը (հավաքական ամբողջություն նշանակելու տեսանկյունից սա համեմատելի է **շեն, ավան, ուտան, քաղաք, թաղ** և նման այլ բառերի):

Վանքն անվանվում է մասն **մենաստան, որովհետև** նրա բնակիչները աշխարհիկ կյանքը մերժած և ճգնակեցությամբ ու աղոթքներով Աստծուն մերձենալու նպատակ ունեցող մենակյացներն էին: Ըստ այդմ էլ կերտվել են **մենանոց // միայնանոց** (մաս՝ **միայնոց**), **մենաուրանոց // մենաուրաստան, մենաստան // միայնաստան, միանձնանոց, առանձնանոց, առանձնարան, միայնակեցանոց** բառերը:

Վանքի մեկ ուրիշ անվանման մեջ ընդգծվում է այն, որ բնակիչները կրոնավորներ են, ուստի և ունենք՝ **կրօնաուրանոց // կրօնաուրաստան**. կրօնատման հիման վրա (ամփոփումով)՝ **կրօնաստան** (հմմտ. հզվդ. **կրօնարան, կրօնատուն**):

Վանքին փոխաբերության հիման վրա տրված մյուս անվանումների համար հիմք են դարձել մենակյացների հատկանիշները: Այսպես՝ **պարկեշտանոց** «պարկեշտների բնակարան» և կամ՝ «տեղ, որտեղ պարկեշտ կյանք են վարում» և **հեզանոց** «հեզերի բնակատեղ, տուն» և կամ՝ «որտեղ հեզություն է տիրում»:

Վանք բառի հոմանշային շարքում կան մասն երկրորդային անդամներ. մի շարք բառեր վանք են նշանակում իմաստի ընդլայնման հիման վրա, ինչպես՝ **անապատ**. վանքերը սովորաբար կառուցվել են քաղաքներից, մարդկանցից հեռու, անապատ (բուն նշանակությամբ՝ անբնակ) վայրերում: **Քավարան**, աղոտեղ քավում էին աշխարհիկ մեղքերը: **Փարախ** «հոգևոր հոտի բնակատեղի»:

Ամբողջի (վանքի՝ իբրև կացարանի) բաղկացուցիչ մասը կազմող միավորը կոչվում է **խուց** «կրոնավորի փոքրիկ սենյակ» (հմմտ. **տուն** և **սենյակ**): Խուցը տարբերակվում է ըստ նպատակի՝ **ճգնարան** (մասն **ճգնանոց**)

«նգնելու տեղ՝ խոց, սենյակ», **աբեղայարան (աբեղանոց, աբեղայատուն)**¹ «կուսակրոն վանականի՝ աբեղայի կացարան», **վարդապետարան (վարդապետանոց)** «վարդապետների ապրելու տեղ. կացարան»:

Աբբայարան-ը վերաբերում է կաթոլիկ եկեղեցուն՝ «աբբայի՝ կաթոլիկ վանքի վանահոր կացարան»:

Մեմնարան բառը կարող է նշանակել և՛ ամբողջը («վանք»), և՛ մասը («խոց»)՝ «միայնակ ապրելու տեղ» (նաև ոչ կրոնական բովանդակությամբ):

Բառախմաստային քննվող խմբի մեջ գտնվում ենք մի շարք բառեր, որոնք կրոնական ուղղվածություն ունեն այնքանով, որ նշանակում են հոգևորականների, եկեղեցու սպասավորների բնակարան, կացարան-պաշտոնատուն՝ նստավայր: Այդ բառերը, որպես կանոն, կազմությամբ բաղադրված են՝ բարդ և ածանցավոր, ուր իբրև առաջին բաղադրիչ դրվում է եկեղեցական աստիճանավոր, պաշտոնյա նշանակող բառը, ինչպես՝ **սարկավագատուն, քահանայատուն, երիցատուն, եպիսկոպոսարան, պատրիարքարան, մետրապոլիտարան (մետրապոլտարան)**:

Կաթոլիկոսի կացարան-նստավայրի անվանման հիմքում ընկել են հոմանիշ բառեր՝ վեհ, վեհափառ⇒**վեհարան**, կաթոլիկոս⇒**կաթողիկոսարան**, հայրապետ⇒**հայրապետանոց**:

Առաջնորդարան, ժողովրդապետարան, հովվանոց բառերի առաջին բաղադրիչները հոգևոր դասի ներկայացուցչին անվանում են փոխաբերաբար՝ **առաջնորդ** «թեմի, վիճակի հոգևոր ղեկավար», **ժողովրդապետ** «կրոնական, քրիստոնեական համայնքի պետ, առաջնորդ», **հովիվ** «հոգևոր հոտի առաջնորդ»:

Վերոհիշյալ շատ բառեր ունեն իրենց մույնանիշները՝ կերտված բառակազմական այլ միջոցներով: Այսպես՝ **եպիսկոպոսանոց—եպիսկոպոսարան—եպիսկոպոսատուն, պատրիարքարան—պատրիարքանոց, հայրապետանոց—հայրապետարան, ժողովրդապետարան—ժողովրդապետանոց, կաթողիկոսարան—կատողիկոսատուն**, որոնցից առավել գործածական են առաջինները, իսկ վերջին բառը խիստ հազվադեպ է, և առհասարակ անհաջող կազմություն կարելի է համարել²:

Նույնանիշության հիմքում, բնականաբար, ընկել է **-արան** և **-անոց** վերջածանցների փոխարկելիությունը, իսկ **-տուն** բաղադրիչի՝ իր հիմնական իմաստից բացի «կացարան-պաշտոնատեղի» կամ «պաշտոնատուն» նշանակություններով հանդես գալը սովորական երևույթ է. հմմտ. **ղեսպանատուն**, արևոտ. **նախարարատուն, քաղաքատուն** և այլն: Ի տարբերություն վերոհիշյալ բառերի, **աբեղայատուն** բառում **տուն**-ը նշանակում է նաև «սենյակ, խոց»:

Ուշագրավ մի իրողություն. **քահանայատուն** նշանակում է «ծխատեղ քահանայի տուն. երիցատուն», **քահանայանոց**-ը՝ «դպրոց, որ սաներին պատրաստում է քահանայության» և **քահանայարան**-ը՝ «եկեղեցի, տաճար՝ իբրև քահանայագործության տեղ»: Նույն ձևով՝ **սարկավագարան** և **սարկավագանոց** բառերը նշանակում են «եկեղեցում այն բաժանմունքը, որտեղ

¹ Սա կարող է նշանակել նաև ամբողջը՝ «վանք», իբրև աբեղաների բնակատեղի:

² Հմմտ. Յաղագս կաթողիկոսության Տառն Խաչկալ և շինելու գեղեղեցին և գտուն կաթողիկոսարանին ի գիտն Արգիմայ (Ասող., էջ 150), Եւ նորոգեաց գտուն կաթողիկոսարանին ի Ծիրակ գատտի (Ասող., էջ 185):

ժողովում են սարկավագները», իսկ **սարկավագատուն**-ը՝ նաև «սարկավագի բնակարան»³:

Վերոհիշյալ բառերից տարբերվում են հետևյալ երկուսը՝ **ժամատուն**⁴ (ժամ «եկեղեցի») և **վանատուն** (ուղղակի **վանք**), որոնք նշանակում են «եկեղեցուն կից՝ նրա մոտ գտնվող (նրան պատկանող) բնակարան, իջեվան»⁵:

Կրոնական-հոգևոր ըմբռնումով կացարանների իմաստային այս խմբի մեջ կարելի է զետեղել նաև **եկեղեցի** բառը. իբրև «Աստծո տուն», «Տիրոջ (տերունական) տուն», «Սուրբ հոգու օթևան»: Հմմտ. ...զնկատեսլ տեղին **տանն Աստուծոյ** շինեաց (Ագաթ., էջ 468), Սա ... աստուածային արդարև արմատենի տնկեալ ի **տան Տեառն** (Խոր., էջ 298), զնոսա արար ... **տուն օթևանաց Հոգւոյ սրբոյ**» (Ագաթ., էջ 328):

Միայն կոնկրետ համատեքստում, ըստ իրադրության, կրոնական երանգավորում է ստանում **գուր** «հոր, փոս» բառը. հմմտ. **գբացի //գրեցի**. (Հովհաննես ճգնավորի մականունը), ինչպես նաև հետևյալ հետաքրքրական հատվածը: Կերպարանքը առանց դուռը բախելու մտավ Սահակ Պարթևի **գաղտնարան գուրը**: Քարե անտաշ սեղանի մոտ նստած էր Սահակ Պարթևը» (Դեմիրճ., էջ 264): Միանգամայն որոշակի է, որ խոսքը կացարանի մասին է: Նույն ձևով՝ **վիրապ** «հոր, մահապարտների գուր» (Գր. Լուսավորչի հետ կապված՝ Խոր վիրապ):

Հարկ է անդրադառնալ, թե ժամանակագրական առումով հետազոտվող բառերը հայոց լեզվի զարգացման ո՛ր շրջանին են վերաբերում: Հայտնի է, որ արդեն 4-րդ դարի կեսին Հայոց կաթողիկոս Ներսես Մեծը հիմնել է հազարից ավելի մենաստան, այսինքն՝ մինչև 5-րդ դարի սկիզբը՝ հայերեն գրերի ստեղծումը, Հայաստանում լայն թափով կառուցված են եղել կրոնական-հոգևոր կյանքին անոշվող կացարաններ: Հետևաբար՝ քննարկվող իրականություններն անվանող այն բառերը, որոնք գործածվել են 5-րդ դարի հայերեն գրավոր հուշարձաններում, պետք է վերագրվեն նախագրային ժամանակաշրջանին:

5-րդ դարի հայերենում են վկայվել **վանք**, **կուսաստան**, **մենանոց//միայնանոց**, **մենարան//միայնարան**, **մենաստան//միայնաստան**, **միանձնանոց**, **եղբայրանոց**, **եպիսկոպոսանոց** բառերը, որոնց զգալի մասը, անտառակույս, նախագրային շրջանի կազմություններ են:

Մի շարք բառեր էլ գործածվել են գրաբարի հետագա շրջաններում, ինչպես՝ **կաթողիկոսարան**, **եպիսկոպոսարան**, **պատրիարքարան**, միջին հայերենում՝ **աբանոց**, **աբեղանոց առանձնոց**, **մետրապոլիտարան**⁶:

Համեմատաբար նոր ժամանակների կազմություններից են՝ **առաջնորդարան**, **աբեղաչարան**, **վեհարան**, **եպիսկոպոսատուն**, **սարկավագատուն**, **աբբայարան** և այլն: Սակայն այս բառերն ամենևին էլ չեն արտահայտում

³ Հմմտ. **մենաստան**, **մենանոց**, **մենարան** բառերը **տուն** բաղադրիչով նույնարմատ մնատուն բառի հետ, որը բոլորովին այլ իմաստ է արտահայտում. «մի՛ ընտանիքի համար կառուցված (հարմարավետ) տուն»:

⁴ Ժամատների դերի վերաբերյալ կարծիքները բազմազան են. դրանք ծառայել են որպես եկեղեցի, դպրոց, ժողովարան, գավիթ, գրչատուն:

⁵ Վանական համայնքների մաս կազմող ուրիշ միավորներ՝ **հյուրատուն**, **հյուրանոց**, **իջնանատուն**, կրոնական երանգավորում չունեն:

⁶ Համեմատվել են հայերենի տարբեր բառարաններ, մատենագիրների երկեր, համաբարբառներ՝ բառերի առավել հավաստի ժամանակագրությունը սրբագելու նպատակով:

այնպիսի հասկացություններ, որոնք նոր ժամանակների իրողություններ են: Օրինակ՝ **կաթողիկոսարան** հասկացությունը հետագայում ըմբռնվել է նաև իբրև «վեհի՛ վեհափառի նստավայր-կացարան»՝ **վեհարան**: Մեկ ուրիշ դեպքում **-անոց**, **-արան** վերջածանցների փոխարեն գործածվել է **տուն** բառը. հմմտ. **եպիսկոպոսանոց**, **եպիսկոպոսարան**՝ և հզվի. **եպիսկոպո տա-տուն**:

Հետագուովող ոչ բոլոր բառերն են նախապես կրոնական երանգավորում ունեցել: Այսպես՝ **վանք** (<վան+ք) սկզբնապես նշանակել է «օթե-վան, իջևան, բնակարան, կայան, հյուրանոց», ապա տեղի է ունեցել իմաստի նեղացում, կոնկրետացում՝ «կրոնավորների մենաստան՝ բնակատեղի», որը ժամանակակից հայերենում դարձել է հիմնական:

Երկրորդային նշանակություններ ունեն **կուսանոց**, **վարդապետանոց** և **հովվանոց** բառերը: **Կուսանոց** «կույսերի՝ միանձնուհիների վանք» բառի նշանակությունը դեռևս հիմ հայերենում ճյուղավորված է եղել՝ «աղջիկների փակարան և կրթարան», «տան մեջ կանանց բաժինը», ինչպես նաև՝ «վանք մենակյացների (ընդհանրապես, առանց սեռային տարբերության, քանզի **կույս** նշանակել է նաև «մաքուր, անարատ. երիտասարդ»): **Վարդապետանոց**՝ «վարդապետների կացարան» և «վանքին կից բարձր կարգի ուսումնարան, որն ավարտողներն ստանում էին գիտական աստիճան», **վարդապետարան** «վարդապետանոց (կացարան)», «ուսումնարան»⁷ և «կրոնական վարդապետությունն պարունակող գիրք»:

Հետաքրքրական է **հովվանոց** բառը, որի բազմիմաստության հիմքում ընկել են **հովիվ** բառի երկու՝ ուղղակի և փոխաբերական իմաստները՝ «խաշնարած» և «հոգևոր հոտի առաջնորդ», այստեղից էլ՝ «հովվի բնակատեղի» և «եպիսկոպոսարան» իմաստները:

Առանձնարան, **առանձնանոց**, **առանձնոց** բառերը նշանակում են նախ «առանձնասենյակ», առանձին՝ մենակ ապրելու տուն, բնակարան» առհասարակ, ապա նաև կրոնական երանգավորումով:

Բառիմաստային այս խմբի բառերի արմատներն ըստ ծագումնաբանության ներկայացնում են հետևյալ պատկերը: Բնիկ հայերեն արմատներ են⁸ կամ նրանցով են բաղադրվել՝ **հովիվ**, **հայրապետ**, **երեց**, **մեն**, **միալն**, **կրօն**, **եղբայր**, **միանձն**-, **առանձն**/ի/ն-, **կոյս**-ը և **սարկավազ**-ը հավաստի ստուգաբանությունն չունեն:

Վանք/ք/ և **վարդապետ** բառերը հնագույն իրանյան փոխառություններ են, **խուց**-ը՝ ասորական. երեքն էլ նախապես բոլորովին զերծ են եղել կրոնական որևէ բովանդակությունից: Իրանյան է նաև **վեհ** արմատը: Իսկ ահա հոգևորականի աստիճան նշանակող բառերը փոխառյալ են ասորերենից՝ **աբեդա**, **քահանա**, կամ **հունարենից**՝ **եպիսկոպոս**, **պատրիարք**, **կաթողիկոս**, **մետրոպոլիտ**, **աբբա** (վերջինս հայերենին է անցել հավանաբար եվրոպական որևէ լեզվի միջնորդավորումով): Փոխառությունների աղբյուրը հասկանալի է, որովհետև քրիստոնեությունը Հայաստան է թափանցել հունարեն և ասորերեն լեզուները կրողների միջոցով:

⁷ Վանքերը միջնադարյան Հայաստանի կրթական-լուսավորական և մշակութային կենտրոններն են եղել, ուստի պատճառաբանված են փոխանվանական կիրառությունները. Խորակերտի վանքը, օրինակ, հայտնի է նաև Խորակերտի վարդապետարան, Գոշավանքը՝ վարժապետարան, համալսարան, ճեմարան անուններով և այլն:

⁸ Ստուգաբանությունները տրվում են ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» (հ. 14, Երևան, 1971—1979):

Քննվող բառերից բառակազմական արժեք ունեն վան/ք/⁹ և խոց բառերը: Առաջինից են բաղադրվել վանական, վանակից, վանահայր, վանամայր, վաներեց, վանակեաց, վանապետ, վանաքոյր, վանուհի, վանքամերձ, վանքապատկան, հազվդ. վանքական, վանքալին, վանքատեղ, վանքատուն, վանքաշինություն (ք ածանցով կազմվածները նոր են), վանատուն¹⁰, արգելավանք, կուսավանք, մայրավանք, որոնցից կացարան են նշանակում վերջին չորս բառը: Վանք բառը հաճախ հանդիպում է հատուկ անուններում, որոնք առաջացել են բաղադրյալ (հարստրական) անվանումների կրցման հետևանքով, ինչպես՝ Մակարավանք, Նորավանք, Գոշավանք, Սաղմոսավանք, Գնդեվանք և (հմտ. Հաղարծնի վանք, Կիրանց վանք, Սանահինի վանք, Խունասի վանք և այլն): Բաղադրիչները կապակցվում են հատկացուցչային և որոշչային հարաբերությունների հիման վրա, ինչպես՝ Հայրավանք = (հոգևոր) հայրերի վանք, Նորավանք = նոր վանք և այլն:

Խոց բառից ունենք մենախոց, կալանախոց, ճգնախոց, խցաբնակ, խցավոր, խցիկ, (ձեղնախցիկ, հեռախոսախցիկ). մեծ մասն արտահայտում է կացարանի իմաստ: Դրանց մեջ միայն ճգնախոց-ն է կրոնական երանգավորումով, մենախոց-ը և խցիկ-ը ունեն և՛ աշխարհիկ, և՛ կրոնական, կալանախոց-ը՝ միայն աշխարհիկ բովանդակություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.—Ագաթանգեղալ Պատմություն Հայոց, Երևան, 1983:

Ասո.—Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, Պետերբուրգ, 1885:

Բուզ.—Փաստոսի Բիզանդացու Պատմություն Հայոց, Երևան, 1987:

Դեմիրճ.—Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1983:


Եղ.—Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989:


Խոր.—Մովսիս Խորենացու Պատմություն Հայոց, Երևան, 1981:

Փարպ.—Ղազարալ Փարպեցու Պատմություն Հայոց. Թուրք առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982:

⁹ Իբրև բառ են ընկալվում հոգնակիի ձևերը՝ վանորայք/վաներայք:

¹⁰ Վանատուն, վանատոր, իջեւան և մի քանի այլ բառեր բաղադրվել են վան արմատից:





ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՆԻՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության մեջ միջ-նադարյան մայրաքաղաք Անին նշանակալից դեր է կատարել որպես կաթողիկոսական աթոռանիստ, եպիսկոպոսանիստ, հոգևոր-եկեղեցական կյանքի կենտրոն, ազգային-եկեղեցական ժողովների գումարման վայր: Անին հաշ իրականության մեջ երբևէ գոյություն ունեցած ամենից մեծաթիվ եկեղեցիներ ու առավել բազմանդամ հոգևորականություն ունեցած քաղաքն է եղել, իսկ նրա շրջակայքում ժամանակին բարգավաճել են Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առինի, Խժկոնքի վանքերը հանդիսանալով հոգևոր ու մշակութային կյանքի առաջնակարգ կենտրոններ: Այնուհանդերձ, Անին, որպես կաթողիկոսանիստ և եկեղեցական կենտրոն քիչ է ուսումնասիրվել:

Երբեմնի մայրաքաղաքի գիտական հետազոտման ծավալումը պայմանավորված լինելով շուրջ մեկ դար առաջ Ն. Մառի կատարած պեղումներով և քաղաքի ճարտարապետական հուշարձանների առաջացրած մեծ հետաքրքրությամբ, սկզբից ի վեր ընթացավ նյութական մշակույթի ուսումնասիրության ճանապարհով: Անիի քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությանը զուգընթաց հետազոտվեցին քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, վիմագրությունը, արհեստագործությունը և այլն: Այս խորքի վրա, եկեղեցական կյանքի և հոգեվոր մշակույթի խնդիրները մնացին ստվերում: Միայն վերջին տասնամյակներին որոշ հետազոտություններ ու հոդվածներ նվիրվեցին Անիի հոգևոր մշակույթի գործիչներին (Հովհաննես Սարկավագ, Սամուել Անեցի, Մխիթար Անեցի, Վարդան Անեցի, Սարգիս Անեցի), քաղաքի գրչությանը, մանրանկարչությանը, որմնանկարչությանը: Սակայն կարելի է վստահաբար ասել, որ Անիի եկեղեցական կյանքի պատմությունը և հոգևոր մշակույթն ամբողջության մեջ, դեռևս չեն ուսումնասիրվել:

Ստորև մենք կանդրադառնանք այդ ընդգրկուն նյութի մեկ կարևոր հատվածին՝ ներկայացնելով Անին, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռանիստ: Հարցն ուղագրավ է թե՛ հաշ եկեղեցու, թե՛ Անի քաղաքի պատմության տեսանկյունից, միաժամանակ կարող է նպաստել Բագրատունյաց Հայաստանի հոգևոր կյանքի ներքին կառույցի ուսումնասիրությանը:

Նախ համառոտակի ծանոթանանք կաթողիկոսարանի Անիում հաստատվելու նախապատմությանը: Բագրատունի ստաշին չորս թագավորների արքայանիստ են դարձրել Բագարանը, Երագավորսը (Շիրակական), Կարսը: Այդ անհաստատ կացությունը հիմնովին փոխվեց, երբ Աշոտ Գ Ողորմածը (953—957) Դվինը գրավելու անհաջող փորձից հետո 961 թ. Կարսից տեղափոխվեց Անի, այստեղ էլ թագադրվեց մեծ հանդիսությամբ, և հնամյա ամրոց-բնակավայրը հռչակեց երկրի մշտական մայրաքաղաք: Նույն շրջանում կաթողիկոս Անանիա Ա Սոկացին (946—968) ընդառաջելով Աշոտ Ողորմածի խնդրանքին ու հրավերին, հայրապետական Աթոռը Աղթամարից փոխադրեց երկրի քաղաքական կենտրոն՝ Շիրակ, այն հաստատելով Արգինա ավանում: Թագավորի և կաթողիկոսի այս հեռատես գործերի շնորհիվ մեծապես ամրապնդվեց Հայոց պետականությունը. Բագրատունիները քաղաքական առաջնությունը վերջնականապես խլեցին Արծրունիներից:

Անանիա Սոկացու մահից հետո Շիրակավանում գումարված եկեղեցական ժողովում նոր կաթողիկոս ընտրվեց Վահան Ա Սյունեցին (968—969): Սակայն վերջինիս աթոռակալությունը շատ կարճ տևեց, քանի որ նա քաղկեդոնականների՝ մասնավորապես վրացիների հետ մերձեցման փորձեր կատարեց և հայ ավանդապահ հոգևորականությունը չհանդուրժեց այդ: Վահանի գործերը քննելու և նրան պարսավելու համար **969 թ. եկեղեցական ժողով գումարվեց նորահաստատ Անի մայրաքաղաքում:** Ժողովի համաձայնության, արդյունքի, մասնակիցների մասին դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարսնեցի Ասողիկը գրում է. Կաթողիկոս Վահանիկ... ընդ քաղկեդոնականն սիրելություն և հաճություն կամեցաւ առնել թղթովք: Յորոյ վերայ ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի քաղաքն Անույ՝ Տէր Խաչիկ Արշակունեաց եպիսկոպոս և հայր Պողիկարպոս առաջնորդ Կամբջաձորոյ և հայր Սարգիս՝ Հոռոմոսի վանաց վանական և հայր Ստեփանոս՝ Սևանայ վանաց վանական և այլ եպիսկոպոսունք և հարք բազումք: Իսկ Վահանիկն փախստեայ անկանի ի Վասպուրական... Իսկ ժողովն կամակցութեամբ Աշոտոյ Շահնշահի կաթողիկոս հաստատեաց Հայոց զՍտեփանոս վանական Սևանայ¹:

Փաստորեն, Ստեփանոս Գ Սևանցին (969—972), որը ժողովականներից մեկն էր, կաթողիկոս է ընտրվել և ձեռնադրվել հենց Անիում: Բայց նրա կարճատև աթոռակալությունն ամբողջովին անցել է Վասպուրականի Աբուսահլ թագավորի հովանավորությունը ստացած և տեղի Զորավանքում հաստատված Վահան Սյունեցու դեմ մղված պայքարում: Վերջինս մտադիր չէր հրաժարվել կաթողիկոսությունից, որի պատճառով, փաստորեն իշխում էին երկու կաթողիկոս՝ «Ստեփանոս՝ լԱնի եւ Վահան ի Վասպուրական»²: Այս իրավիճակը Ստեփանոսին ստիպում է գումարել **Անիի երկրորդ եկեղեցական ժողովը:** Մ. Օրմանյանը գրում է. «Ստեփանոս փութաց երկրորդ ժողով մը գումարել կնճոռտ խնդիրը լուծելու համար, որ անշուշտ Անիի մէջ հաւաքուեցաւ, և որուն մասնակցեցան Արարատի և Սյունիքի կողմերուն եպիսկոպոսներէն և վարդապետներէն զատ նաև բազմութիւն կրօնաւորաց ի Տարօնոյ ի Հաշտենից ի Ծոփաց եւ ի Խորձենոյ (Ասողիկ), այսինքն է Տաճկաց և Յունաց ենթարկեալ գաւառներուն եպիսկոպոսները և վարդապետները, որոնք մրցակից հայ թագավորներուն ենթակա չլլալով իրա-

¹ Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, ՄՊր, 1885, էջ 181:

² Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 290:

սախտն հաշտարարի... դերը պիտի վարէին: Ժողովին... իբր հետեանք կը ցուցուի բանակցութեան մը պետքը, զայն անձամբ կատարել յանձն կառնու նոյնիսկ Ստեփանոս կաթողիկոս»³: Անիի երկրորդ եկեղեցական ժողովն ըստ Մ. Օրմանյանի, տեղի է ունեցել 971 թ., որից հետո Ստեփանոսը մեկնել է Վասպուրական: Հեղինակի կարծիքով, այդ ընթացքում կաթողիկոսն աթոռակալել է Անիում⁴, որը միանգամայն ընդունելի է: Այս շրջանում Արգիման կաթողիկոսանիստ լինելու համար ավելի ընդարձակ հնարավորություններ չունէր (այն կառուցապատվեց հաջորդ կաթողիկոսի ժամանակ), քան Անին, իսկ Ստեփանոսը, որպէս Աշոտ Ողորմածի հովանավորդալ, պետք է ավելի մոտ լինէր նրան: Անիի ժողովների գումարման վայր լինելը և Ստեփանոս Օրբելյանի վկայությունը՝ Ստեփանոսի երկու տարի Անիում գտնվելու մասին⁵ նույնպէս հաստատում են, որ կաթողիկոսն աթոռակալում էր մայրաքաղաքում: Ծիշտ է, սույն դեպքերի գլխավոր աղբյուրը՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը շատ համառոտաբան է, մասնավորապէս Անիի երկրորդ ժողովի մասին խոսում է հպանցիկ, սակայն բնական պետք է համարել, որ Տարոնի, Ծոփքի և այլ վայրերի երևելի հոգևորականներն իրենք են կաթողիկոսի մոտ եկել, հավաքվել մայրաքաղաքում, ուր և որոշում է կայացվել բանակցությունների մասին:

Այսպիսով կարելի է ասել, որ Աշոտ Ողորմածը կարողացավ մի կարճ ժամանակահատված (969—971) հասնել իր նպատակին՝ քաղաքական և հոգևոր իշխանությունը կենտրոնացնել Անիում: (Սույն իրողությունը պատմագրության մեջ գրեթէ անտեսվել է): Սակայն հետագա դեպքերը իրավիճակի որոշ փոփոխության հանգեցրին: Արծրունի թագավորն ու Վահան կաթողիկոսը առանց ունկնդրելու բանակցության մեկնած Ստեփանոսին ու նրա երկու ուղեկիցներին, կալանեցին նրանց և արգելափակեցին Աղթամարում: Քիչ անց, Ստեփանոսի հետ եկած երկու վարդապետներին ազատ արձակելով, նրան փոխադրեցին այլ վայր, ուր և մեկ տարի անց մահացավ: Նույն 972 թ. մահացավ նաև Վահան Սյունեցին:

Դրանից հետո կաթողիկոս ձեռնադրվեց Անանիա Մոկացու քրոջ որդին՝ Արշարունիքի եպիսկոպոս Խաչիկ Ա-ն (973—992), որը մինչ այդ էլ նշանակալից դեր ուներ Անիի թագավորությունում: Ասողիկի բնորոշմամբ նա «միապետեալ խաղաղեցոյց զաշխարհս Հայոց» և որպէս խոհեմ գործիչ մեղմեց Բագրատունիների և Արծրունիների միջև առկա հակամարտությունը: Թվում է, որ այս նույն նպատակով նա չմնաց Անիում, Մոկացու օրինակով հաստատվեց Արգիմայում և «ուզեց հալրապետական աթոռին հաստատուն ձեռք տալ»⁶: Ասողիկը բավական հանգամանորեն է ներկայացնում նորընտիր կաթողիկոսի Արգիմայում կատարած գործերը. «...զկնի Վահանայ և Ստեփանոսի եկաց կաթողիկոս Հայոց Տէր Խաչիկ... Եւ նորոգեաց զտուն կաթողիկոսարանին ի Ծիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգիմայ... Եւ ի նմին գեղջիկնեաց զտուրք կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք... հանդերձ ևս երիւք եկեղեցեօք՝ նոյնաձև... յօրինուածովք, և զարդարեաց... ոսկեթել անկուածովք ի զարդ ոսկոյն և արծաթոյն և ամենայն զարդոյ պայծառութեան ջահաբորբոք լուսաւոր անօթոց. այլ և զաստուա-

³ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Պէյրութ, 1959, էջ 1119—1120:

⁴ Նույն տեղում:

⁵ Ստեփանոս Օրբելյան, էջ 290:

⁶ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1125:

ծախսու կտակա յոլովակի ստացեալ, զԳիրս Սուրբս զառաքելաւասցս և զմար-
գարեաքարոզ պատգամս, հանդերձ ամենայն վարդապետացն ձայնիք»⁷:
Ինչպէս տեսնում ենք, Խաչիկ Արշարունու կատարածն ավելի շատ կաթո-
ղիկոսարանի հիմնադրություն է հիշեցնում, քան թե պարզապէս նորոգում:
Այն միաժամանակ ենթադրել է տալիս, թե նրա նախորդները՝ Անանիա
Մոկացին և հատկապէս Ստեփանոսը, Արգիման չեն դիտել որպէս հա-
տատուն նստաւայր, համոզված լինելով, որ Աթոռը շուտով մայրաքաղաք
է փոխադրվելու (մի բան, որ իրոք կատարվեց Արշարունուց հետո): Սա-
կայն Խաչիկ Ա-ն Արգիման շենացնելու համար նվազագույնը երկու կարևոր
պատճառ ուներ. առաջինը՝ վասպուրականցիներին հանդարտեցնելու ցան-
կությունն էր, երկրորդը՝ կաթողիկոսությունը քաղաքական իշխանության
ազդեցությունից հնարավորին չափ անկախ ու ինքնուրույն պահելու ձեռ-
նունը:

Մինչև կաթողիկոս ընտրվելը Խաչիկն արդեն իսկ մեծ հեղինակություն
էր (պատահական չէ, որ Անիի առաջին եկեղեցական ժողովի մասնակից-
ների շարքում առաջինն է հիշվում), իսկ աթոռակալության տարիներին
հանդես է գալիս որպէս խորագետ, ձեռներեց ու հեռատես գործիչ, մեծա-
պէս բարձրացնելով կաթողիկոսության վարկը թե՛ երկրի ներսում, թե՛ դըր-
սում: Նրա օրոք ծաղկում է Արգիմայի վարդապետարանը, որի բանիմաց
սաների թվում կային նաև ազնվագարն աշխարհականներ:

977 թ. Բագրատունյաց գահը ժառանգած Սմբատ Բ Տիեզերակալը
(977—990) ընդարձակում է Անիի պարսպապատ մասը և սկսում տաճա-
րի՝ Անիի կաթողիկէի շինարարությունը. «Սմբատ... արկանէ հիմն և մեծա-
շէն եկեղեցուն ինոյն քաղաքին Անույ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ,
որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց լԱրգիմայ»⁸: Պարզ է, որ դա
արվում էր կաթողիկոսարանը Անի փոխադրելու նպատակով:

Սմբատը, սակայն, չտեսավ իր ձեռնարկի ավարտը: Մահացած ար-
քային փոխարինեց նրա եղբայր Գագիկ Ա Բագրատունին (990—1020), որի
կինը՝ Կատրամիդէ թագուհին ստանձնեց կաթողիկէի շինարարության հո-
վանավորությունը: Տաճարի կառուցումն ավարտվեց 1001 թ.⁹, իսկ Խաչիկ
Արշարունու հաջորդը՝ Սարգիս Ա Սևանցին (992—1019) Արգիմայից փո-
խադրվեց Անի, մայրաքաղաքը դարձնելով նաև կաթողիկոսական աթոռա-
նիստ: Դրանով, փաստորեն, իրագործվեց դեռևս Աշոտ Ողորմածի ժամա-
նակ նախանշված ծրագիրը և քրիստոնեական Հայաստանի առաջին մայ-
րաքաղաքներ Վաղարշապատի ու Դվինի օրինակով Անին ևս դարձավ կա-
թողիկոսանիստ:

ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ. ԱՆԻԻ ԱԹՈՌԻ ԱՄՐԱՊԵՂՈՒՄԸ

Գագիկ Բագրատունին կանխապես ճանաչում էր Սարգսին, թագա-
դրվելուց հետո նրան էր տվել Սևանի վանքի առաջնորդությունը, իսկ Խա-
չիկի մահից հետո՝ առաջադրվել է կաթողիկոս: Այս մասին Ասողիկը գրում
է. «...զկնի տեսառն Խաչկայ՝ Գագիկ արքայ Հայոց ժողով եպիսկոպոսաց

⁷ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 184—185:

⁸ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 187:

⁹ Անիի կաթողիկէի շինարարության ավարտի թվականի հարցում տարբեր տեսակետ-
ներ կան, սակայն առավել ընդունելին 1001 թվականն է:

արարեալ, որ լաշխարհէն Հայոց և որ ի Յունաց կողմանէն... և նստուցանէն գնա (Սարգսին, 4. Մ.) յԱթոռ կաթողիկոսութեանն մեծաշուք պատուով...»¹⁰:

Գագիկ Առաջինի տիրապետությունը համարվում է Անիի թագավորության առավելագույն վերելքի շրջանը: Նրա ժամանակ երկրի զորության և միասնության ապահովման գործում կարևորագույն դեր ուներ նաև Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Սարգիս Սևանցին, թեև, ըստ Ասողիկի «անապատառք կենաց» սիրահար էր, բայց 27-ամյա աթոռակալության ընթացքում կարողացավ հմտորեն կազմակերպել Հայոց եկեղեցական կյանքը, կաթողիկոսարանի բազմաճյուղ գործունեությունը:

Աթոռի Արգինայից Անի փոխադրության մասին Մ. Օրմանյանը գրում է. «Սարգիս... առաջին գործն եղավ աթոռանիստ տեղույն փոխադրությունը: Ընտրողական ժողովը գումարում էր Անիի մեջ... Սարգիս կրցած է ընտրությունէ և օծումէ ետքը այլևս Արգինա չդառնալ և մնալ Անի, Գագիկի մոտ»¹¹: Սակայն ընդունված է Աթոռի փոխադրման ժամանակ համարել 1001 թ.¹², երբ ավարտվեց Մայր տաճարի կառուցումը: Սկզբնաղբյուրներն այս հարցում որոշակի թվական չեն նշում:

Գագիկ թագավորը շատ մեծ նշանակություն էր տալիս կաթողիկոսությանը, այն համարելով առանձին թագավորությունների մասնատված երկրի համախմբման կարևորագույն ազդակ: Ինչպես ստորև կտեսնենք, բազմաթիվ հարցերում թագավորն ու կաթողիկոսը հանդես են գալիս միասնաբար: Թագավորն իր բարեպաշտ վարքով ու կենցաղով առիթ չէր տալիս հոգևորականության պարսավանքին (մի բան, որ արվում էր Սմբատի ժամանակ), կաթողիկոսն էլ՝ սրբակյաց վարքով ու խոհեմ գործելակերպով նպաստում էր Անիի թագավորության ավագության ամրապնդմանը: Նման պայմաններում, բնական է ենթադրել, որ Սարգիսը Անի է փոխադրվել օծումից անմիջապես հետո: Այսինքն, Օրմանյանի տեսակետն ավելի տրամաբանական է թվում և կարծում ենք Աթոռի Արգինայից Անի տեղափոխման ժամանակ պետք է համարել 992 թ.: Նման ենթադրությունն անուղղակիորեն հաստատվում է Ասողիկի հայտնած մի տեղեկությամբ: 998 թ., երբ հայկական ու վրացական զորքը մեկնել էր Մամլան ամիրայի դեմ պատերազմելու Գագիկն ու հավանաբար նաև Կարսի Աբաս թագավորը եկեղեցում աղոթում էին «հանդերձ հայրապետան», - Աստծուց հաղթություն խնդրելով («Եւ թագաւորքն... զցալգան՝ պաշտօն սաղմոսանուագ երգոց ուխտն սրբութեան հանդերձ հայրապետան կատարէին»)՝¹³: Այսինքն, Սարգիս կաթողիկոսն Անիում էր, և տեղի եկեղեցիներից մեկում արարողություն էր կատարում թագավորների ներկայությամբ: Ի վերջո քրիստոնեա զորքը մահմեդականների նկատմամբ փախում հաղթանակ է տանում Ծմբոյի ճակատամարտում :

Սարգիս Սևանցին նպաստում է նաև ներքին տարաձայնությունները հարթելուն: Հայտնի է, որ 1001 թ. Գագիկի և Տաշիրի թագավոր Դավիթ Անհողիկի ռազմական բախումը կանխվել է «միջնորդությամբ հայրապետին՝ Տեառն Սարգսի»¹⁴ և Դավիթը հնազանդության է եկել:

¹⁰ Մտեփանոս Տառնեցի Ասողիկ, էջ 259:

¹¹ Մ. Օրմանյան, Ըշվ. աշխ., էջ 1162—1163:

¹² Ե. Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա, «Հայրատավանք», 1990, էջ 113:

¹³ Մտեփանոս Տառնեցի Ասողիկ, էջ 271:

¹⁴ Նույն տեղում, էջ 280:

1006 թ. Կատրամիդե թագուհու հոր՝ Սյունիքի Վասակ թագավորի խնդրանքով և Գագիկ Ա-ի միջնորդությամբ Սարգիս Սևանցին Անիում Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Հովհաննեսին: Միաժամանակ Սյունիքի աթոռին են վերադարձվում Անանիա Մոկացու ժամանակ՝ Հակոբ եպիսկոպոսի խոսվության պատճառով նրանից խլված միտրոպոլիտության պատվին ու արտոնությունները, ինչպես և Անիի կաթողիկոսարանի «սրբաբանի սենյակում» պահվող սրբությունները¹⁵: Կաթողիկոսի սույն ձեռնարկը մեծապես ամրացրեց Հայաստանյայց եկեղեցու ներքին միասնությունը, իսկ Սյունիքի թագավորությունն ավելի սերտորեն կապեց Անիի կենտրոնական թագավորության հետ:

Սարգսի աթոռակալության ժամանակ շարունակվում են հունական եկեղեցու հետ եղած դավանաբանական հակադրությունները, որոնց գագաթնակետը դարձավ 1007թ. ծոազատիկը: Իսկ երկրի ներսում գլուխ էր բարձրացրել թոնդրակեցիների աղանդը և կաթողիկոսն անհրաժեշտ պաշար էր մղում նրանց դեմ:

Թեև պատմական շատ սուղ վկայություններ են պահպանվել, բայց բնական է, որ Անիի կաթողիկոսարանում շարունակվել են Արգինայի բարի ավանդները: Մասնավորապես, Աթոռի հետ միասին պետք է որ մայրաքաղաք փոխադրվեին նաև կաթողիկոսարանի հարուստ գրադարանը և վարդապետարանը, մանավանդ որ այդ շրջանում ևս Հայոց եկեղեցին կարիքն ուներ բանիմաց վարդապետների և ուսուցիչների: Պատմիչ Արիստակես Լաստիվերտցին թվում է Սարգսի ժամանակ Անիի կաթողիկոսարանում գտնվող երեք նշանավոր վարդապետներին՝ գրելով՝ «Եւ էին յայն ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրանուն և Յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք», այնուհետև նշում է ևս մի քանիսին (Սամուել Կամբջաձորեցի, Ստեփանոս Տարոնեցի և այլք) ու ավելացնում՝ «յորոց ատուրս բարձրանայր յոյժ եղջիր եկեղեցոյ ողղափառ խոստովանութեամբ»¹⁶: Սարգիս կաթողիկոսի պատվերով է իր «Տիեզերական պատմությունը» շարադրել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը: Ընդհանրապես Անիի կաթողիկոսարանը շատ ճոխ ու հարուստ է եղել, ունեցել բազմանդամ միաբանական կազմ: Ըստ Մատթեոս Ռոմայեցու՝ «երկուտասան եպիսկոպոսք և չորս վարդապետք ի տան հայրապետին անպակաս լիներ և վաթսուն երեց՝ ի կրօնաուրաց...»¹⁷:

Անի քաղաքի պեղումների ժամանակ հետազոտողները կաթողիկոսարանի ավերակները չեն հայտնաբերել, թեև իրավացիորեն ենթադրվել է, որ այն պետք է Մայր տաճարի մոտակայքում գտնվելիս լիներ: Թ. Թորամանյանի վկայությամբ. «Կաթողիկեին շուրջը... բացի արևելյան կողմեն, ուր մեկեն ավելի մատուռներ կան... հարավային կողմի վրա կերևին դարձյալ ուրիշ հին շինությանց մնացորդներ ալ»¹⁸: Իսկ անցյալ դարի կեսերին քաղաք այցելած Ն. Սարգիսյանը գրում է. «քարակոյտք աներակաց բազում են

¹⁵ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ կաթողիկոսը Հովհաննես եպիսկոպոսին է հանձնում «Սյունյաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժեք գավազանը և պատվական գահավորակը, որոնք պահվում էին հայրապետանոցի սրբաբանի սենյակում»: Ստեփանոս Օրբելյան, էջ 304:

¹⁶ Արիստակիսի Լաստիվերտցու Պատմություն, Երևան 1963, էջ 26:

¹⁷ Մատթեոսի Ռոմայեցու Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1869, էջ 148:

¹⁸ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 153:

շուրջ եկեղեցան, որք թերևս բնակարանք էին եկեղեցականաց հանդերձ հայրապետանոցա»¹⁹:

Սարգիս Սևանցու Անիում կատարած շինարարական գործերից մեկի մասին է վկայում պատմիչ Վարդան Արևելցին: Նա գրում է, որ կաթողիկոսը «Ծիմեաց վկայարան սրբոց Հռիփսիմեանց առնթրեր Կաթողիկէին Անույ և փոխեաց անդ զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդիսի, և կարգեաց զօրն տօն մեծ»²⁰: Սա չափազանց արժեքավոր տեղեկություն է, որը ցույց է տալիս Սարգիս Սևանցու՝ Անին ոչ միայն կաթողիկոսարանի ներկայությամբ հաստատված եկեղեցական կենտրոն տեսնելու, այլև Հայ Առաքելական եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող սրբավայր դարձնելու ձգտումը: Փաստորեն, ինչպես որ Հայոց եկեղեցու բնօրրան Վաղարշապատում է Մայր տաճարը (Ս. Աստվածածին) գտնվում Հռիփսիմեանց կույսերի վկայարանների հարևանությամբ, այնպես էլ կաթողիկոսը Անիի Մայր տաճարի (Ս. Աստվածածին) մոտ կառուցել է Հռիփսիմեանց կույսերի վկայարան, սրբերի մասունքները տեղափոխել այստեղ և «մեծ տօն» սահմանել «...Վաղարշապատի Կաթողիկէին հին սովորութեան հետևողութեամբ»²¹: Այստեղ տեղին է հիշել, որ Անին իր վաղ շրջանի պատմության մեջ արդեն ուներ ս. Գրիգոր Լուսավորչի անվան ու գործունեության հետ կապված մի դրվագ (այդ մասին են վկայում քաղաքի Ներքին բերդի եկեղեցու մի արձանագրությունը և Վարդան Արևելցին)²² և Հռիփսիմեանց կույսերի նշխարների մոտքով ավելի էր ամրապնդում իր դերը՝ որպես համահայկական հոգևոր կենտրոն, սրբավայր²³:

Այսպիսով, Սարգիս Սևանցու աթոռակալության տարիներին Հայոց եկեղեցին ծաղկում է ապրում, ամրապնդվում է Անիի Աթոռը: Բնութագրական են Արիստակես Լաստիվերտցու խոսքերը՝ «...պալծառացան կարգք եկեղեցույ և լուսաորեցան մանկունք ուխտի սրբութեան... քանզի ունէր զԱթոռ հայրապետութեան Տէր Սարգիս, սնեալ սրբութեամբ ի ծոց եկեղեցույ... զոր շնորհին Աստուծոյ կոչեն ըստ արժանատրութեան և ատուցանեն յԱթոռ մերոյ Լուսաորչին, որ նորեն կարգօքն քաղաքավարեալ ի մարմնի, բարի հանդիսիւք աւարտեաց զկեանս իր»²⁴:

Ցավոք, նման բարենպաստ կացությունը հիմնովին փոխվեց Սարգիս Սևանցու հաջորդի օրոք: 1019 թ. Գագիկ Ա-ի համաձայնությամբ և հենց իր՝ ծերունագարդ Սարգիս Սևանցու ձեռքով Անիում կաթողիկոս է ձեռնադրվում Պետրոս Ա Գետադարձը (1019—1058): Գրիգոր Լուսավորչի օրոք

¹⁹ Ն. Սարգիսյան, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 117: Վաղաքի հատակագծի զննումը թույլ է տալիս ենթադրել, որ կաթողիկոսարանը կարող էր Մայր տաճարից արևմուտք՝ հենց նրա դիմաց կառուցված լինել:

²⁰ Մեծին Վարդանայ Բայրձաբերդցու Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 123: Թ. Թորամանյանը ենթադրում է, որ Սարգսի կառուցած վկայարանը Կաթողիկէից հարավ-արևելք գտնվող «ուրանկլուն մատուռն է»: Թ. Թորամանյանը, նշվ. աշխ., էջ 163:

²¹ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1178:


²² Դիվան հայ վիմագրության, հ. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 58, Վարդան Արևելցի, էջ 117—118:

²³ Անին քրիստոնեական միջնաբերդ և արքայան քաղաք դարձնելու ուղղությամբ մինչ այդ և դրանից հետո ևս զանազան քայլեր են արվել: Այս մասին համաձայնորեն տե՛ս Վ. Մաթևոսյան, Հոգևոր Անին, «Գարուն», 1991, № 10, էջ 26—29: Սույն հոդվածում, խմբագրության մեղքով թույլ է տրվել ցավալի վրիպում. 27 էջում «մեհենական սրբավայր-ամրոց» արտահայտության փոխարեն տրվել է «մահմետական սրբավայր-ամրոց»:

²⁴ Արիստակես Լաստիվերտցի, էջ 25—26:

կաթողիկոս ձեռնադրված նրա որդի Արիստակեսից հետո, սա երկրորդ դեպքն էր, երբ կաթողիկոսի կենդանության ժամանակ ձեռնադրվում էր նրա հաջորդը: Սկզբնաղբյուրները չեն հալտնում Սարգսի հրաժարվելու պատճառը, կարելի է ենթադրել, որ րենա ծերության հետևանքով է այդ քայլին դիմել: Հնարավոր է, որ կաթողիկոսարանի գործունեության ոլորտն այդ շրջանում այնքան էր ընդարձակվել, որ անհրաժեշտ էր մշտապես գործուն, եռանդուն, հայրապետ ունենալ: Ինչևէ, Սարգիսը դրանից հետո տեղափոխվում է Անիի մերձակա Հոռոմոսի վանք, ապրում ևս երեք տարի, 1022 թ. մահանում ու թաղվում այդտեղ: Բարեհամբավ կաթողիկոսն իր հաջորդին ժառանգություն է թողնում Անիի շեն ու զորեղ Աթոռը:

(Ծարունակելի)



ԳՐՈՖ. ՎԱՐՍԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախագահ Մայր Աթոռի ճարտարապետական
հանձնաժողովի

ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈ ԵՎ ՀԱՎԱՏՔԻ

Հայ ժողովրդի պատմության այս արմատական վերափոխման շրջափուլում՝ Հայաստանի անկախ հանրապետության ստեղծման իրավիճակում, երբ հնարավոր դարձավ հաղթահարել անցյալ վարչակարգի օրոք տասնամյակներ տևող կրոնահալած պայմանները, ծայր առավ ժողովրդի զանգվածային դարձը դեպի հավատքն ու Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հոգևոր սննդի կարիքը դարձավ համատարած:

Որպես պատմական այդ շրջադարձի առհավատչյա հանրապետության տարբեր քաղաքներում ու բնակավայրերում, մաս ներքին սփյուռքի հայաշատ քաղաքներում, սկսեց ավելանալ գործող եկեղեցիների թիվը ու կառուցվում են նոր եկեղեցիներ այնտեղ, որտեղ դրանք չկային կամ ավերվել էին¹:

Բացառություն չէր կարող կազմել մայրաքաղաք Երևանը, քանզի մրս մի քանի եկեղեցիները զոհ էին դարձել քաղաքաշինության շահերին, իսկ մնացածները, թեև Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության տարիներին հիմնովին վերանորոգվեցին կամ վերակառուցվեցին ու ըստ պատշաճի բարեզարդվեցին, սակայն չեն բավարարում հալատացյալների օր ըստ օրե ավելացող հոգևոր կարիքները: Այդ կապակցությամբ էլ հասունացել էր Երևանի արդի քաղաքաշինության ու ճարտարապետական մակարդակին համապատասխան մի նոր, Մայր տաճարի կառուցման հարցը:

Տաճարի կառուցման մասին հաղորդագրության մեջ կարդում ենք. «Մայր Աթոռի Դիանը երջանիկ է ավետելու մեր սորբ եկեղեցուն և հայ հաւատաւոր ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որ Գերագոյն Հոգևոր խորհուրդի և Մայր Աթոռի ճարտարապետների լանձնաժողովի, ի նշանավորումն Հայաստանում քրիստոնէությունը պաշտոնական կրոն հռչակելու հազար եօթը հարիւր ամեակի, 1989 թուականի յուլիսի 14-ի համաւեղ նիստում որոշեցին մայրաքաղաք Երևանում կառուցել մի մեծաշուք եկեղեցի հայկական դասական ճարտարապետական ոճի հիման վրայ, որ-

¹ Տես «Էջմիածին» ամսագիր, 1989, էջ 10:

տեղ շուրջ երկու հազար հինգ հարիս հաստացեալներ կարողանան միատեղ աղօթել:

Դիան Մայր Աթոռի»²

Ս. Էջմիածին, 18 յուլիսի 1989 թ.

Հիշյալ որոշումից հետո սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը միջնորդեց Երեւանի քաղաքապետարանի առջև համապատասխան հողամաս տրամադրելու վերաբերյալ: Քաղաքապետարանն իր 1990 թ. ապրիլի 4-ի № 8/47 որոշմամբ հարմար գտավ Մայր տաճարի կառուցմանը տրամադրել մայրաքաղաքը կիսով չափ օղակող շրջանային ալգեպուրակի համարյա վերջում, դեպի երկաթուղային կայարանը տանող Տիգրան Մեծ մայրուղուն չհասած բարձրադիր հատվածը (15640 մ² չափերի), հարևանությամբ Երվանդ Քոչարի փողոցին: Պիտի խոստովանել, որ հատկացումը վիճահարույց եղավ որոշ մասնագետների կողմից (այն կապակցությամբ որ տաճարի տեղահորությամբ կրճատվելու է մայրաքաղաքի հասարակական կանաչի տարածությունը), սակայն իրավիճակն այնպիսին է, որ տրամադրածից ավելի հարմար տարածք այժմ հնարավոր չէ գտնել բուն կառուցապատված Երեւանի որևէ մասում՝ առանց իրացման համար մեծածախս և սշխատատար ջանքեր գործադրելու (ինչը կարող է խոչընդոտել շինարարությունը արագորեն՝ մինչև 2001 թվականը իրականացնելուն):

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունը կրող Երևանի Մայր տաճարի հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը խոուներան բազմության և իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ 1990 թ. մարտի 31-ին, շաբաթ օրը³: Օրվա հանդիսավոր արարողության բացման խոսքով հանդես եկած Երևանի քաղաքապետ Արտուշես Գեղամյանն իր ելույթը սկսեց հետևյալ խոսքերով.

«Հայ ժողովրդի վաղնջական պատմության բոլոր ժամանակահատվածներում էլ կրոնի դերը մեծանշանակ է: Գտնվելով հին աշխարհի սուևտրական մեծ ճանապարհների խաչմերուկներում, դառնալով կայսրությունների, գահազան ասպատակիչների ռազմական գործողությունների թատերաբեմ, Հայաստանը դարերի ընթացքում ստիպված է եղել մշտապես պայքարել իր գոյության համար :Ամեն մի զավթիչ մտնելով հայոց հողը, փորձել է ոչ միայն հպատակեցնել ժողովրդին, այլև ուժացման ենթարկել նրա լեզուն, հավատքը, ավանդույթները, աւվորությունները: Այդ ամենի դեմ պայքարում գորավիզ է եղել նրա հավատն ու կրոնը»:

Բացարձակ ճշմարտություն: Դրան ավելացնենք նաև, որ հայ եկեղեցին է գտնվել ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում, երբ Հայաստան աշխարհը զրկվել է պետականությունից:

«Կանգնեն տարիներ,—ավարտում է իր խոսքը քաղաքապետ Գեղամյանը,—հայոց հինավուրց մայրաքաղաքում վեր խոյացած հավատի նոր տաճարում խնկարույր անաղարտությամբ կցուցյան ու կրուրեն մեր ժողովրդի հույսի, հավատի, սիրո, հավերժության մոմերը, նրա միասնության ու անմահության պայծառ առհավառչյան, իսկ նրա հուսո ու հավատի պղնձաձայն զանգերն էլ մշտաբոուն կպահեն մեր խիղճը, մշտապես հի-

² «Էջմիածին» ամսագիր, 1989, է, էջ 11:

³ Մանրամասն նկարագրությունը տես «Էջմիածին» ամսագիր, 1990, Բ—Գ, էջ 29—35:

շեցնելով մեզ փորձության ծանր ժամերի, մեր ապագայի, մեր ժողովրդի ճակատագրի հանդեպ՝ մեր պարտքի զգացման մասին»:

Այնուհետև հանդես է գալիս Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ն:

Բազմության համակ լուծության մթնոլորտում հնչում են նրա հոգեպարար խոսքերը:

Արտաբերելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հիմնադիր սուրբ Գրիգոր Լուսավորչի «Եկեք կառուցենք Լուսոյ սուրբ Խորանը, որովհետև նրանից ծագեց մեզ լոյս, Հայաստան աշխարհի վրայ» հայտնի կոչը, որով մենք սուրբը առաջին անգամ դիմեց հայ ժողովրդին 301 թվականին, սուրբ Էջմիածնի տաճարը հիմնադրելիս, այնուհետև Վեհափառ Հայրապետը հանգամանորեն անդրադարձավ հայ եկեղեցու անցած փառավոր ուղուն, նրա ունեցած ծանրակշիռ դերին մեր ժողովրդի պատմական ճակատագրում:

Տաճարի հիմնարկեքի արարողության և այդ առթիվ դրված հուշաքարի օրհնումը նա իրավացիորեն գնահատում է որպես մեր օրերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերագարթոնքը խորհրդանշող պատմական մի նշանավոր իրադարձություն:

«Իմ հայացքը ուղղելով դեպի մոտ ապագան, մոտ տասը տարի հետո,—շարունակում է Վեհափառ Հայրապետը,—իմ հոգու աչքերով տեսնում եմ այն հույակապ տաճարը, որ պիտի բարձրանա այստեղ, և սուրբ խաչը պիտի սլանա դեպի երկինք: Հավանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց գուցե կհիշեք ինձ այդ օրը»:

Ավարտելով իր խոսքը նա մաղթեց՝ «Թող Աստված օրհնի մեր Ս. Եկեղեցին, թող Աստված օրհնի համայն հայ հավատացյալ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, թող Աստված օրհնի մեր Մայր Հայրենիքը և մեր հայրենի պետությունը, հավիտենական Հայաստանի: Մենք մեկ հավատք ունենք, մեկ եկեղեցի, մեկ ազգային մշակույթ և մեկ Մայր Հայրենիք: Աղոթենք նրանց անսասանության մեր բոլորի արդար իղձերի հաղթանակի համար»:

Այնուհետև ձայնը տրվեց տողերիս հեղինակին: Արժանափիշատակ այս արարողությանը սկսվող և այնուհետև մայրաքաղաքի հիմնավորց հողի վրա մի նոր, առավել հոյակապ տաճարի կառուցումը դիտելով որպես խորհրդանշ թարոյագաղափարական այն արմատական վերսփոխումների, որոնց ձեռնամուխ է եղել մեր հայրենիքը, վստահությամբ հայտնեցի, որ նորակառույց Մայր տաճարը հիրավի պիտի դառնա մայրաքաղաքի ճարտարապետական զարդերից մեկը, հայկական եկեղեցական ճարտարապետության մերօրյա մի մեծագործություն:

Արժանին մատուցելով Վազգեն Ա. կաթողիկոսի տասնամյակներ տևող շինարարական քեղմնավոր գործունեությանը, որին վկա եմ և աջակից իր գահակալության բոլոր տարիներին, մաղթեցի նրան արևշատություն, առողջություն, կորով ու եռանդ, որպեսզի կենդանության օրոք իրականացված տեսնի այսօր հիմնադրվող տաճարի կառուցումը՝ ի վաշխումն մեր հավատացյալ ժողովրդի Հայրենիքում և ի սփյուռս աշխարհի:

Հիմնարկեքի արարողությունն ավարտվեց Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու երգեցիկ խմբի կողմից «Տերունական աղօթք»-ի կատարմամբ և Վեհափառ Հայրապետի կողմից տաճարի հիմնաքարի օրհնությամբ:

Քարի վրա քանդակված է խաչ և մետրոյայն գեղեցիկ գրերով արձանագրված է՝ «Այստեղ կառուցուելու է Երեւան քաղաքի Մայր տաճարը յա-

նուն Ա. Գրիգոր Լուսատրչին նուիրում հայ եկեղեցու հիմնադրութեան 1700 ամեակին. Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, 31 մարտի 1990 թ. »:

* * *

Հիմնարկերի հանդիսավոր արարողությունից հետո Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի առաջնահերթ հոգաբ եղավ կառուցվող տաճարը լիարժեք նախագծով ապահովելը: Նպատակահարմար գտնվեց դրա համար հայտարարել մրցույթ, մասնակցությամբ Հայրենիքի և սփյուռքի հայ ճարտարապետների: Այդ մասին թերթերում հայտարարություն է տրվում 1990 թ. ապրիլի 16-ին, առաջադրանքը վերցնելու համար նշանակելով ժամկետ՝ հունիսի 15-ը, իսկ արտասահմանյան մասնակիցների համար՝ հուլիսի 15-ը:

Հայտարարության մեջ ամփոփ շարադրված են մրցույթի հիմնադրույթները, իսկ նախագծերի հանձնման համար, նկատի ունենալով դրանց բարդությունը, տրվել է ժամանակ մեկ և կես տարի, մինչև 1991 թ. դեկտեմբերի վերջը:

Մրցույթի մասնակիցների համար կազմված նախագծային առաջադրանքը պարունակում է 20 կետից բաղկացած նախապայմաններ և նախագծերի լուծման նկատմամբ ներկայացվող պահանջները, նաև ոճական կարգի (հայկական ճարտարապետության դասական ոգով և միաժամանակ՝ արդիական նկարագրով): Աղոթասրահի տարողության չափը իջեցվել է մինչև 1500 հոգի:

Առաջադրանքին կցված էին երեք փաստաթղթեր.

ա) տեղանքի հանքաքանական հետազոտության վերաբերյալ եզրակացություն,

բ) հատկացված հողամասի սխեմատիկ հանույթը 1:2000 մասշտաբով,

գ) տեղանքի գեոդեզիական հանույթը 1:1000 մասշտաբով⁴:

Մասնակցելու է կարգ, համաձայն որի թվարկվում է ներկայացվելիք նախագծերի կազմը՝ վրաները հնգանիշ թվերով խորհրդանշաններ (դեկզներ), իսկ նախագծերի քննարկումն ու ընտրությունը վստահվում է Հոգևոր Խորհրդի կողմից նշանակված մրցույթային հանձնաժողովին: Ներկայացված նախագծերից առավել հաջող երեք նախագծերի հեղինակները կվարձատրվեն տաս հազարական ուրլով, իսկ նախագծերից մեկի ընտրությունը կվերապահվի Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ին:

Մինչ մրցույթի մասնակիցները գործի անցան, արդյունքների համար ինչ-որ չափով մտավախություն կար, քանզի հայրենի ճարտարապետների համար թեման անծանոթ էր, մոր էր ու չմարաված, թեև բոլորն էլ ունեն ճարտարապետական հայեցի դաստիարակություն: Հայ ճարտարապետության պատմության դասընթացն անցնելիս, նրանք ծանոթացել են նաև հայկական եկեղեցական ճարտարապետությանը, ուստի հուսանք, որ կկարողանան հաղթահարել ստեղծագործական այս բարդ ու պատվավոր թեմայի լուծման ճանապարհին առաջացած դժվարությունները: Իսկ ինչպիսին են սփյուռքից ստացվելիք նախագծերի հեղինակների կարողությունները,

⁴ Հարկ է նշել, որ առանց ճարտարապետական հանձնաժողովի քննարկմանն արժանացած ինչպես առաջադրանքի, այնպես էլ հանույթային գծագրերի ոչ լիարժեքության պատճառով մասնակիցների բազում հարցումներ տեղյին, ուստի հարկ եղավ լրացուցիչ պարզաբանումներ հղել նրանց: Այդ հանգամանքը բացասական անդրադարձ ունեցավ ներկայացրած նախագծերից շատերի վրա:

չգիտենք: Թե մեկի և թե մյուսի արդյունքները կպարզվեն միայն մախագծերը ստացվելուց ու ցուցադրվելուց հետո:

Հայաստանի մասնակիցների համար անբարենպաստ եղավ տրված ժամանակը, հատկապես 1991 թ. աշնան-ձմռան ցրտաշունչ, առանց ջեռուցման, էլեկտրական լուսավորության հաճախակի անջատման վերջին փուլը: Այդ կարգի խոչընդոտներն, անշուշտ, դժվարացրին մասնակիցների գործը: Սակայն ի պատիվ իրենց պիտի ասել, որ շնորհիվ ցուցաբերած բացառիկ պատասխանատվության, կարողացան հաղթահարել եղած դժվարությունները, ավարտի հասցնել մախագծերն ու սահմանված ժամանակին դրանք ներկայացնել Մայր Աթոռ: Մինչ այդ, սկսել էին ստացվել մահ արտահամանյան մասնակիցների մախագծերը (որովհետև մախակալան հաղորդման մեջ մախագծերի հանձնման ժամկետը նշանակված էր սեպտեմբերի 1-ը):

Մնում էր կազմակերպել ստացված մախագծերի ցուցահանդեսը՝ հասարակական դիտման, ապա մահ քննարկման համար: Այն կատարվեց Հայաստանի նկարիչների տան երկու հարկի ցուցասրահներում 1992 թ. փետրվարի 6-ից 25-ը: Ընդամենը ստացվել էին 33 մախագիծ, բոլորն էլ հնգաթիվ խորհրդանշաններով (դեկոներով), առանց հեղինակների անունագգանունների նշման:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի Հոգևոր Խորհրդի որոշմամբ կազմվեց 9 հոգուց բաղկացած մրցույթային հանձնաժողով: Նրա կազմում էին տողերիս հեղինակը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանը, ժողովրդական արտարապետ Զիմ Թորոսյանը, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, Հայաստանի Հանրապետության արտարապետության և քաղաքաշինության մախարար Ռոմեո Ջուլիակյանը, Երևան քաղաքի գլխավոր արտարապետ Միհաս Միհասյանը, արտարապետ Արմեն Հախնազարյանը (Գերմանիայից), Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոսը և վաստակավոր արտարապետ Բաղդասար Արզումանյանը:

Մրցույթային հանձնաժողովի առաջին նիստը մասնակցությամբ Ամենայն Հայոց Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի, տեղի ունեցավ 1992 թ. փետրվարի 6-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Հանձնաժողովի մախագահ ընտրվեց արտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, իսկ քարտուղար՝ վաստակավոր արտարապետ Բաղդասար Արզումանյանը:

Նկատի ունենալով առաջացած իրավիճակը (ոտրլու արժեչափի իջեցումը) հանձնաժողովը հարկ համարեց խնդրել Վեհափառ Հայրապետին նշտումներ մտցնել մրցույթի մախապես հաշտարաված պայմաններում: Նորին Սրբության համաձայնությամբ երեք գլխավոր մրցակիցների չափը բարձրացվեց 50 հազարի: Սահմանվեց մահ լրացուցիչ երեք խրախուսական մրցանակներ՝ յուրաքանչյուրը 10 հազար ոտրլու չափով:

Հաստատվեցին մրցույթային հանձնաժողովի աշխատակարգն ու ժամկետները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարվեց փետրվարի 17-ին, մախագծերի ցուցադրման տեղում, նկարչի տան սրահներում: Մինչ այդ, 10 օր տրված ժամանակամիջոցում հանձնաժողովի անդամները պիտի առանձին-առանձին հանգամանորեն ծանոթանային ցուցադրված բոլոր մախագծերին ու

դրանց բացատրագրերին, խորամուխ լինելին լուծումներում ու կարծիք կազմելին ցուցադրված նախագծերի մասին:

Փետրվարի 17-ին կայացած գիտի ժամանակ հանձնաժողովը նախագծերը ուշադիր դիտելուց հետո որոշվեց հետագա քննարկման համար թողնել 11 նախագիծ, իսկ մնացած 22 նախագծերը, որոնք պակաս չափով էին բավարարում, հանել քննարկումից, այլևս նրանց չվերադառնալ:

Երեք օր անց, փետրվարի 20-ին նորից նկարչի տանը տեղի ունեցած գիտի ժամանակ, կրկին անդրադառնալով առանձնացրած նախագծերին, որոշվեց հետագա քննարկման համար հավանություն ստացած նախագծերի թիվը կրճատել ևս 3-ով, թողնելով 85258, 77777, 70301, 12358, 00301, 20001 և 88816 խորհրդանշաններով նախագծերը: Նշված նախագծերը փոխադրել Մայր Աթոռ սուրբ Էջմիածին և ցուցադրել Նոր Վեհարանի սրահներում, որպեսզի հնարավորություն ընձեռնվի Վեհափառ Հայրապետին ու վանքի միաբանությանը նույնպես դրանց ծանոթանալու:

Մրցութային հանձնաժողովի փետրվարի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նոր Վեհարանում կայացած գիտի վճռորոշ եղավ: Նորից և հանգամանորեն դիտելով ու քննարկելով առանձնացված ութը նախագծերը, հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ դրանցից ոչ մեկը լիովին չի կարող երաշխավորվել կառուցման համար: Ուստի առավել հաջողների կարող են խրախուսել մրցանակներով՝ առանց կառուցման իրավունքով օժտելու:

Այն նախագծերը, որոնք կարծանանան քարձր մրցանակի, հանձնաժողովը, կտա իր դիտողությունները և կսահմանի ժամկետ նախագծերում փոփոխություններ կատարելու համար:

Ընդունված չափանիշների համաձայն, գնահատելով քննարկմանը թողնվածները, 3-ը հանվեցին: Բարձր մրցանակի արժանի միայն երկու գախագծեր ճանաչվեցին, իսկ խրախուսական մրցանակի՝ երեքը: Դրանից հետո տեղի ունեցավ քվեարկություն: Բարձր մրցանակի համար միաձայն հավանություն ստացավ 77777, իսկ 8 ձայնով՝ 70001 խորհրդանիշով ներկայացված նախագծերը, իսկ խրախուսական մրցանակների՝ 70301 (միաձայն), 12358 և 19432 (երկուսն էլ 6 ձայնով) նախագծերը:

Ըստ գոյություն ունեցող կարգի, դրանից հետո բացվեցին այդ խորհրդանիշները կրող ծրարները և հայտնի դարձան հավանության արժանացած նախագծերի հեղինակները:

Նախորդ գիտումն կայացրած որոշման համաձայն բարձր մրցանակի արժանացած երկու նախագծերի վերաբերյալ դիտողություններ կազմելու նպատակով գումարվեց մրցութային հանձնաժողովի ևս մեկ գիտ, որի ժամանակ յուրաքանչյուր նախագծի վերամշակման համար կազմվեցին մրցութային հանձնաժողովի դիտողություններն ու հանձնարարականները:

Ցուցաբարհույ մնացին միայն տարբեր մրցանակների արժանացած նախագծերը, որոնց հարկ համարեց ծանոթանալ Վեհափառ Հայրապետը՝ դիտելուց հետո տալով իր հավանությունը մրցութային հանձնաժողովի որոշումներին:

Դրանով հանձնաժողովն ավարտեց աշխատանքները:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի դիվանատան անունից ի լուր հասարակայնությանը և մրցության մասնակիցների տեղեկատվական մամուլում հրապարակվեց մրցութի արդյունքներն ամփոփող հերթինիշյա հաղորդագրությունը:

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիվանատունը հայտնում է, այսու, որ ավարտվեցին Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700 ամյակի կապակցությամբ Երևանում կառուցվելիք Մայր տաճարի նախագծերի (հայտարարված մրցույթի) քննող հանձնաժողովի աշխատանքները:

Նախագծերի քննարկումից պարզվեց, որ ներկայացված 33 աշխատանքներից և ոչ մեկը լրիվ չի բավարարում մրցույթի պայմաններին, ուստի հնարավոր չեղավ առանձնացնել 3 նախագիծ ներկայացնելու համար Վեհափառ Հայրապետին վերջնական ընտրություն կատարելու:

Ուստի հանձնաժողովը որոշեց առավելություն ունեցող երկու նախագծերի հեղինակներին շնորհել մրցանակ՝ յուրաքանչյուրին հիսուն հազար ուրվի պարգև և 3 նախագծերի հեղինակներին շնորհել խրախուսական մրցանակներ, յուրաքանչյուրին տրամադրելով տասը հազարական ուրվի:

Մրցանակի արժանացած նախագծերն են.

— 77777 խորհրդանիշով նախագիծը. հեղինակ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Հայկի Բյուրքչյան:

— 70001 խորհրդանիշով ներկայացված նախագիծը. հեղինակ ճարտարապետ Արտակ Բենիկի Դուլյան, մասնակցությամբ ճարտարապետ Հայկ Երեմի Ասատրյանի:

Խրախուսական մրցանակի արժանացել են.

— 70301 խորհրդանշանով նախագիծը. հեղինակներ ճարտարապետներ Անահիտ Արթուրի Թարխանյան, Արթուր Տիգրանի Բաղդասարյան և Լևոն Դավթի Հակոբյան:

— 12358 խորհրդանշանով նախագիծը. հեղինակներ ճարտարապետության դոկտոր Օլեգ Մամիկոնի Վարդանյան և ճարտարագետ Նվեր Իսմաիլի Ասատրյան:

— 19432 խորհրդանշանով նախագիծը. հեղինակ ճարտարապետ Ռազմիկ Սերոբի Ասատրյան:

Հանձնաժողովը որոշեց մրցանակի արժանացած երկու նախագծերի հեղինակներին տալ ժամանակ, համապատասխան դիտողություններով, նախագծերի մեջ բարեփոխություններ կատարելու համար, որից հետո կըկատարվի նախագծի վերջնական ընտրությունը»:

Այժմ անդրադառնանք բարձր մրցանակի արժանացած երկու նախագծերի արժանիքներին ու թերություններին:

Հարկ է նշել, որ երկու հեղինակները տրամագծորեն տարբեր դիրքերից էին ջանացել լուծել առաջադրած ստեղծագործական խնդիրը:

Ստեփան Բյուրքչյանի նախագծում շահեկանը պրոֆեսիոնալ բարձր մակարդակն է, տեխնոլոգիական կարգի հետաքրքիր լուծումներով: Սակայն այն բնորոշ է խիստ արդիականությամբ, ազգային նկարագրի համարյա բացակայությամբ, այն աստիճանի, որ եկեղեցին հասարակական շենքի ընկալում ունի:

Նախագիծը բարեփոխելու համար հեղինակին հայտնվեց մրցութային հանձնաժողովի հետևյալ մասնագիտական դիտողությունները.

1. Հատակագծի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան թևերը, որտեղ նախատեսված են նստելատեղեր հավատացյալների համար, հատակի միջև իջեցնել տաճարի աղոթասրահի հատակի ընդհանուր միջին հավասար: Վերացնել դրանց առջևի հոծ բազրիքը, չի բացառվում այդ թևերի հատակի մեջ թեթությունը դեպի հետ:

2. Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս մատուռների ներքին տարածությունները անհրաժեշտ է նախագծել աղոթասրահների ավանդական ձևով: Այդ ավանդատներում երեք մուտքերի անհրաժեշտություն չկա:

3. Ըստ նախագծի բացատրագրի, տաճարի արտաքին շարքերը շարվում են Ագարակի ոսկեգույն քարով, իսկ ներսի պատերը ծեփվում են: Հանձնաժողովը առարկում է Ագարակի քարի դեմ, որպես անոթակի, իսկ ներսի նախատեսված ծեփը եպոք է փոխարինել քարի երեսպատումով:

4. Որսնանկարների դասավորությունը գլխավոր խորանի աջ և ձախ մասերում, որը մտնում է խորանի մեջ, անհաշող է, չի առանձնացված Աստվածամանի որսնանկարը, որը պիտի լինի իշխող:

5. Տաճարը զրկված է անմիջական բնական լույսից: Գմբեթի ճարտարապետական ծավալային լուծումը չի բավարարում հաշվական տաճարի պահանջներին: Անհրաժեշտ է վերանախագծել:

6. Անհանգստություն է առաջացնում արտաքին ծավալներում ազատ կանգնած պատերի առատությունը, որը խաթարում է հորինվածքի ծավալատարածական համակարգի ըմբռնմանը:

7. Վերանայել երգչախմբին հատկացված տեղը, այն հնարավորին չափ մոտեցնել բեմին: Վերանայման կարիք ունի նաև սղոթասրահի երկու կողմերում տեղավորված նստելատեղերը տանող աստիճանավանդակների դասավորությունը:

8. Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արտաքին և ներքին ծավալների պատերի մշակման ժամանակ առավել չափով օգտագործել հաշվական ավանդական ճարտարապետության ձևերն ու հնարանքները:

9. Տաճարը պետք է ունենա ավելի հայեցի նկարագիր:

Ծարտարապետ Արտակ Դուլյանի (մասնակցությամբ ճարտարապետ Հայկ Ասատրյանի) հորինած նախագիծը նույնպես բնորոշ է շահեկան կողմերով: Այն աչքի է ընկնում հատակագծային և ծավալատարածական կոտ հորինվածքով ու փոխկապակցությամբ, հավատարմությամբ հաշվական եկեղեցական ճարտարապետության ավանդույթներին: Սակայն բնդհանուր նկարագրով խիստ հնամենի է, անհարկի ծանրաբեռնված ճարտարապետական դրվագման միջոցներով, իսպառ զուրկ է արդիական հնչեղությունից:

Նկատի ունենալով ճշված պակասավոր կողմերը, մրցույթային հանձնաժողովը այդ նախագծի վերաբերյալ հեղինակներին ներկայացրեց հետևյալ դիտողություններն ու հանձնարարականները.

1. Հատակագիծը թողնում է բարդ ու կոտրուկվածության տպավորություն:

2. Գլխավոր մուտքը անշուք է, այն պետք է ճարտարապետորեն շեշտել, տարբերելով մյուս մուտքերից:


3. Տաճարի արտաքին և ներքին ճարտարապետական լուծումներում առկա են անհարկի պաճուճանքներ, անհրաժեշտ է պարզեցնել, հնարավորին չափ զուսպ ու միասնական դարձնել:

4. Ծրջապատի շենքերը նույնպես անհրաժեշտ է թեթևացնել ու պարզեցնել:


Երկու նախագծերի վերաբերյալ մրցույթային հանձնաժողովի դիտողությունների ու հանձնարարականների հիման վրա նախագծերի վերամշակման համար, համաձայնությամբ հեղինակների, ժամանակ տրամադրվեց մինչև 1992 թ. սեպտեմբերի վերջը:

Նշելի է մաս, որ մախագծերի ցուցադրության և քննարկման ընթացքում տարբեր կարծիքներ ու առաջարկություններ պարունակող Վեհափառ Հայրապետի անունով ստացված մամակների բովանդակությանը իրազեկ դարձնելու համար տրամադրվեցին մրցութային հանձնաժողովին: Քանի որ դարձք պարունակում էին անընդունելի դրույթներ, հաշվի չառնվեցին:

(Ծառունակելի)



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ



1992 թ. հունիսի 1-ին հանկարծամահ եղավ Տ. Ռոբեն Ավագ քահանա Մարտիրոսյանը: Հանձին արժանապատիվ հոր Հայ Եկեղեցին կորցրեց իր նվիրյալ մշակներից մեկին:

Հանգուցյալը ծնվել է 1927 թ., Երևանում՝ Եղեռնից հրաշքով մազապուրծ եղած Խաչիկի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Արովյանի անվան դպրոցում, որն ավարտել է 1944 թ.:

1945 թ. ընդունվել է նորաբաց Հոգևոր ճեմարան, որի լրիվ դասընթացը փայլուն առաջադիմությամբ ավարտել է 1951 թ.՝ ավարտաճանի թեմանունեմալով Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանը:

1949 թ. ձեռնադրվել է Ավագ սարկավագ՝ Սահակ արքեպիսկոպոսի ձեռքով:

1951—1952 թթ. աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու նպատակով սովորել է Մոսկվայի բարձրագույն հոգևոր ճեմարանում:

1953—1956 թթ. պաշտոնավարել է Հոգևոր ճեմարանում՝ դասավանդելով «Հայոց պատմություն» և «Հոգեհանություն» առարկաները և աշխատակցել է «Էջմիածին» հանդեսին:

1956 թ. ձեռնադրվել է քահանա:

1957—1963 թթ. քահանայագործել է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում՝ միաժամանակ կատարելով թեմի քարտուղարի պարտականությունները:

1963 թ. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ որպես ուսուցիչ աշխատել է Հոգևոր ճեմարանում և իբրև ծխակատար քահանա պաշտոնավարել Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: Տարիներ շարունակ նա այստեղ վարել է Թեմական խորհրդի քարտուղարի պաշտոնը:


Իր անբասիր ծառայության համար ազգիս Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով տարբեր ժամանակներում ստացել է քահանայական լանջախաչ, ծաղկեա փիղոն կրելու իրավունք և ավագության կոչում: Արժանապատիվ տ. Ռուբեն Ավագ քահանան աչքի էր ընկնում ուղղամտությամբ, աշխատասիրությամբ, խոր, հիմնավոր գիտելիքներով:

Հունիսի 3-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում կատարվեց հանգուցյալ տ. Ռուբեն Ավագ քահանայի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան թեմի Առաջնորդական Փոփանորդ տ. Գարեգին եպս. Ներսիսյանի:

Իր դամբանական խոսքում տ. Գարեգին սրբազանը, անդրադառնալով տ. Ռուբեն Ավագ քահանայի շուրջ քառասնամյա հոգևոր գործունեությանը, վեր հանեց հանգուցյալի արժանիքները՝ ամենայն իրավամբ նրան որակելով եկեղեցու քաջ զինվոր, պարտաճանաչ հոգևորական:

Հանգուցյալ տ. Ռուբեն Ավագ քահանա Մարտիրոսյանի աճյունը ամփոփվեց Նուբարաշենի գերեզմանատանը:

Ցիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:





„ԵՇՄԻԱԴՅԻՆ“
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ 1992 г.)

1. Одно злополученное «Циркулярное послание» (Редакционная, написанная по поводу «Возвращение в Армению» «Циркулярное послание» Патриарха армянских католиков Ованнеса-Петра)—(стр. 3—5).
2. Энциклика Католикоса всех армян Вазгена I духовенству Армянской Церкви, 28 августа 1992 г. (стр. 6—9).
3. Совместное отческое слово Католикоса всех армян Вазгена I и Католикоса Киликийского Домна Гарегина II армянскому народу, 30 августа 1992 г. (стр. 10—19).
4. Пребывание Католикоса Киликийского Домна Гарегина II в первопрестольном Эчмиадзине, 24—31 августа 1992 г. (стр. 20).
5. Обращение Католикоса всех армян Вазгена I к генеральному секретарю Всемирного Совета Церквей доктору Эмилио Кастро касательно вопроса Нагорного Карабаха, 11 августа 1992 г. (стр. 21).
6. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I господину Гагикю Арутюняну по случаю избрания вице-президентом Республики Армения, 31 июля 1992 г. (стр. 22).
7. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I господину Хосрову Арутюняну по случаю назначения премьер-министром Республики Армения, 31 июля 1992 г. (стр. 23).
8. Посещение премьер-министра Республики Армения Хосрова Арутюняна к Католикосу всех армян Вазгену I (стр. 24).
9. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за август месяц (стр. 25).
10. Молитва Св. Иоанна Златоуста о Святой Троице (стр. 26—31).
11. Давид Гюрджинян—Наименования жилищ, соприкасающиеся с церковной духовной жизнью (исследование)—(стр. 32—37).
12. Карен Матевосян—Армянское Патриаршество и столица Ани (исследование)—(стр. 38—45).
13. Профессор Вараздат Арутюнян—Алтарь света и веры (об обсуждении проектов и закладки церкви Св. Григория Просветителя в Ереване)—(стр. 46—54).
14. Кончина старшего священника Рубена Мартиросяна, 1 июня 1992 г. (стр. 55—56).

ETCHMIADZIN
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST 1992)

1. An unfortunate «Leter communiqué» (editorial written on the occasion of Catholic Armenians' Patriarch His Grace Hovhannes-Bedros' «Return to Armenia» «Leter communiqué») — (pp. 3—5).
2. Encyclical of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians to all clergymen of Armenian Church, 28-th August 1992 (pp. 6—9).
3. The conjointly paternal address of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians and His Holiness Garekin II, Catholicos of the Great House of Cilicia, to the Armenian people, 30-th August 1992 (pp. 10—19).
4. His Holiness Garekin II, Catholicos of the Great House of Cilicia, in the Holy See, 24—31-st August 1992 (p. 20).
5. The appeal of His Holiness Catholicos Vasken I to Doctor Emilio Castro, the General Secretary of World Council of Churches, in connection with the question of Nagorny Karabagh, 11-th August 1992 (p. 21).
6. Congratulatory cable of His Holiness Catholicos Vasken I to the Honourable Mr. Gagik Harootiunian on the occasion of his election as vice-president of the Armenian Republic, 31-st July 1992 (p. 22).
7. Congratulatory cable of His Holiness Catholicos Vasken I to the Honourable Mr. Khosrov Harootiunian on the occasion of his designation as prime minister of the Armenian Republic, 31-st July 1992 (p. 23).
8. The visit of Mr. Khosrov Harootiunian, prime minister of the Armenian Republic, to the Catholicos of All Armenians (p. 24).
9. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of August 1992 (p. 25).
10. The prayer of St. Hovhan Vosgeberan devoted to the Holy Trinity (pp. 26—31).
11. **David Gyoordjinian**—The names of the dwelling places in connection with the spiritual church life (study)—(pp. 32—37).
12. **Karen Mathevossian**—The Patriarchate of All Armenians and the capital city of Ani (study)—(pp. 38—45).
13. **Prof. Varazdat Harootiunian**—Altar of light and faith (about the foundation of the St. Gregory the Illuminator Church in Yerevan and the investigation of the projects of this church)—(pp. 46—54).
14. Death of Archpriest Rooben Mardirossian, 1-st June 1992 (pp. 55—56).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT SIEGE D'ETCHMIADZINE
(AOUT 1992)

1. **Editorial:** «Une malheureuse encyclique» (à l'occasion de l'encyclique du patriarche des Arméniens catholiques Jean-Pierre XVIII intitulée «Retour à l'Arménie») — (pp. 3—5).
2. Encyclique du 28 août 1992 de Sa Sainteté Vasken Ier adressée au clergé de l'Eglise apostolique arménienne (pp. 6—9).
3. Message commun de Sa Sainteté Vasken Ier, catholicos de tous les Arméniens, et de Sa Sainteté Garéguine II, catholicos de la Grande Maison de Cilicie, adressé au peuple arménien (30 août 1992) — (pp. 10—19).
4. Visite de Sa Sainteté Garéguine II au Saint-Siège d'Etchmiadzine (du 24 au 31 août 1992) — (p. 20).
5. Lettre de Sa Sainteté Vasken Ier adressée au Docteur Emilio Castro, secrétaire général du COE, concernant le problème du Haut-Karabakh (11 août 1992) — (p. 21).
6. Télégamme de félicitation de Sa Sainteté adressé à Monsieur Gaguik Haroutiounian à l'occasion de son élection au poste de vice-président de la République d'Arménie (31 août 1992) — (p. 22).
7. Télégamme de félicitation de Sa Sainteté adressé à Monsieur Khosrov Haroutiounian à l'occasion de sa nomination comme premier ministre de la République d'Arménie (31 août 1992) — (p. 23).
8. Visite du premier ministre de la République d'Arménie à Sa Sainteté Vasken Ier (p. 24).
9. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois août 1992 (p. 25).
10. La prière de St. Jean Chrysostome sur la Sainte Trinité (pp. 26—31).
11. **David Gurdjinian** — «Les noms des habitations se rapportant à la vie spirituelle et ecclésiale» (étude) — (pp. 32—37).
12. **Karen Matévosian** — «Le catholicossat de tous les Arméniens et l'ancienne capitale Ani» (étude) — (pp. 38—45).
13. **Prof. Varazdat Haroutiounian** — «Autel de lumière et de foi» (article concernant la fondation à Erévan de l'église St. Grégoire l'Illuminateur et l'étude des projets de construction de cette église) — (pp. 46—54).
14. Nécrologie de l'archiprêtre Rouben Martirossian décédé le 1er juin 1992 (pp. 55—56).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մի դժբախտ «Թուղթ շրջաբերական»	8
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ Կոնդակը համայն Հայ Եկեղեցու հոգևորականությանը	6
Հայրական խոսք հայ ժողովրդին	10
Մեծի Տանն Կիլիկիո Գաբեգին Բ Կաթողիկոսը Մայր Աթոռում	20
Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոլին	21
Մեծահարգ տիար Գագիկ Հարությունյան, փոխնախագահ Հայաստանի Հանրապե- տության	22
Մեծահարգ տիար Խոսրով Հարությունյանին, վարչապետ Հայաստանի Հանրապե- տության	23
Հայաստանի Հանրապետության վարչապետ տիար Խոսրով Հարությունյանի այցե- ությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին	24
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	25
Ս. Հովհան Ոսկեբերանի աղոթքն ի դեմս Սուրբ Երրորդության	26
ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ—Եկեղեցական հոգևոր կյանքին առնչվող կացարանների անվանումները	32
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Ամին ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Խորան լուսո և հավատքի	38
Հանգիստ Տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանի	46
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	55
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	57
«Etchmiadzine» organe officiel du Saint Siege d'Etchmiadzine	58
	59

Խմբագիր՝ ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱՄԵՆ
«ԷՋՄԻԱՄԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 02.09.1992 թ.: Ստորագրված է տպագրության 12.10.1992 թ.:
 Տպագրական 3,75 մամուլ, թուղթ 70×108¹/₁₆, պատվեր 96:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան

ISSN 0134—5249